ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

«ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 30 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ-Ի

2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ

# ԾՐԱԳԻՐ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Հաստատության գործունեությունը

Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում

Համապատասխանում է պետության քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբի կարիքներին և հնարավորություններին

Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին

2.Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմեր

2.1 Հաստատության շենքային պայմաններ

2.2 Հաստատության նյութատեխնիկական բազան

2.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությանվերլուծությունը

2.4 Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

2.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը

2.6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեղնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը

2.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն

2.8 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

2.9 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն

2.10 Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծություն

3. Զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները

4.Վերահսկողության մեխանիզմներ

5. Զարգացման ծրագրի կատարման ամենամյահաշվետվություն, կատարողական ցուցանիշներն ու պահանջները

6. Ակնկալվող արդյունքներ

7. Եզրափակիչ խոսք

## 1. Հաստատության գործունեությունը

«Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2023-2028 թթ. ծրագիրը մշակվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ-ի սեպտեմբերի 30-ի N 35-Ն հրամանի ՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներով ու ձևաչափով՝ հաշվի առնելով մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև հաստատության մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների առաջարկությունները:Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար:Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: «Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հավկնում է դառնալ այն ուսումնական հաստատությունը, որտեղ յուրաքանչյուր սովորող իրեն կզգա ներառված, որպես սոցիումի լիարժեք անդամ, կունենա անվտանգության լիակատար զգացում, կկարողանա իրագործել ամենահամարձակ մտահղացումներն ու կձևավորվի որպես անհատ՝ ունենալով քննադատական միտք, առաջ գնալու կարողություն: Մարտահրավերները չափազանց շատ են արագ փոփոխվող տեխնոլոգիաների ու հասանելի դարձած տեղեկատվական աշխարհում: «Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի յուրաքանչյուր շրջանավարտ կարողանալու է կատարել ճիշտ ընտրություն ,հետագա մասնագիտական կողմնորոշման հարցում:«Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիրը կազմվել է հանրակրթության ոլորտը կանոնակարգող հետևյալ նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան.

ՀՀ Սահմանադրություն

«Կրթության մասին» ՀՀ օրենք

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենք

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք

ՀՀ Կառավարության սահմանած «Հանրակրթության պետական չափորոշիչ»

ՀՀ կրթության զարգացման մինչև 2030թ. պետական ծրագիր:

«Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի սովորողների համար ստեղծվելու են բոլոր հնարավորությունները՝ իրականացնելու ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով երաշխավորված կրթության իրենց իրավունքը:

### ա) Դպրոցն ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում

ՀՀ իրավաբանական անձանց պետռեգիստրի տարածքային բաժնում գրանցվել է 03.02.2003թ.-ին, իսկ 09.09.2013թ-ին վերագրանցվել է: Դպրոցի կանոնադրությունը նոր խմբագրմամբ հաստատվել է 09.09.2013թ.-ին:

Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Շիրակի մարզ,ք. Գյումրի,Շչեդրինի 7

Լիցենզիաներ՝ տարրական՝ Սերիա Ա N 0562

հիմնական՝ Սերիա Ա N 0551

Տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան՝ 110սահմանային տեղ:

Հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան՝ 150 սահմանային տեղ:

Դպրոցն իրականացնում է հիմնական կրթություն, որը հանդիսանում է պարտադիր կրթության երկրորդ մակարդակը և ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին և երկրորդ աստիճանները:

### բ) Համապատասխանում է պետության քաղաքականության միտումներին, համայնքիշահառու խմբի կարիքներին և հնարավորություններին

«Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նպատակը իր սովորողներին ազգային հենքի վրա որակյալ կրթություն տալն է՝ ապահովելով համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորումը, որոնք կարող են իրենց կրթությունը շարունակել նախնական մասնագիտական (արհեստագործական), միջնակարգ–մասնագիտական և այլ ուսումնական հաստատություններում: Դպրոցի առաջնային խնդիրներից է համապատասխանել պետության կողմից որդեգրած կրթական քաղաքականությանը՝ այն է կրթության հավասար իրավունք տրամադրել յուրաքանչյուր երեխայի, դուրս գալով նրա անհատական կարողունակությունից:

Պետության քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբի կարիքներին և հնարավորություններին համապատասխանելու համար կարևոր է.

Կրթական բոլոր աստիճաններում ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթություն ստանալու հավասար իրավունքը:

Ապահովել սովորողների կրթական կարիքներին, հակումներին, ընդունակություններին,կարողունակություններին և նախասիրություններին համապատասխան նախնական միջին, իսկ այնուհետև բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու հնարավորություն

Ապահովել պետության կրթական քաղաքականության միտումներին,համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխանող ուսումնառություն

Ստեղծել բարենպաստ պայմաններ՝ օժտված երեխաների տարբերակված, ծրացված ուսումնառություն կազմակերպելու համար

Բարձրացնել կրթության որակը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը

Դպրոցում ձևավորել ուսումնական, սոցիալ-հոգեբանական, ստեղծագործ, առողջ միջավայր, որպեսզի յուրաքանչյուր սովորող կարողանա դրսևորել իր կարողունակություններն առավելագույնս:

Հիմնական դպրոցն ավարտելուց հետո հստակ կողմնորոշվի թե որ ուսումնական հաստատությունում է շարունակելու կրթությունը(ավագ դպրոց, վարժարան, մասնագիտական քոլեջ, երաժշտական քոլեջ,արհեստագործական ուսումնարան և այլն):

Գիտակցի ի՞նչ է սեփական արժանապատվությունը և հարգի յուրաքանչյուրի ազատ արտահայտվելու կամքը:

Դպրոցում ունենալ ապահով,ջերմ միջավայր:

Ունենալ անսպառ գիտելիքներով օժտված,հոգատար,հանդուրժող ուսուցիչներ ու մանկավարժական աշխատողներ:

ՏՏ կիրառումը դարձնել ամենօրյա կրթության մաս:

Ձևավորել քննադատական մտածողությամբ և վերլուծող անհատ:

Ունենալ մրցունակ և օրինակելի դպրոց:

**գ) Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին**

## Հաստատության ենթակառուցվածքներն ու հնարավորությունները

Դպրոցի ստեղծման տարեթիվը՝ 1963թ, որպես ռուսաց լեզվի խորացված ուսուցմամբ հիմնական դպրոց:

Տվյալ շենքում դպրոցի տեղակայման տարեթիվը՝ 2000թ.Դպրոցի շենքի տիպը՝ տիպային է՝2 հարկանի, նախագծային հզորությունը՝ 260 աշակերտ: Այս պահին դպրոցում սովորում են 168 սովորող: Ջեռուցման եղանակը՝ լոկալ ջեռուցման ցանց (գազաֆիկացված է), ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ: Դպրոցն ունի Նախնական զինպատրաստության 1 կաբինետ,1 համակարգչային կաբինետ, առկա է ինտերնետ կապ, ունի 1 բացօդյա մարզահրապարակ, 1մարզադահլիճ: Գրադարանի ֆոնդը կազմում է 372 կտոր գիրք:

Աշխատողների թիվը՝ 38

Դասարանների թիվը՝ 9

Դպրոցում կա ձևավորված 3 առարկայական մասնախումբ՝

1.հումանիտար

2. Բնագիտամաթեմատիկական

3. Տարրական կրթության

Դպրոցն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ: Դպրոցում առկա են պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը՝ կանոնակարգվող իրավական ակտերը, դպրոցի կանոնադրությունը, տեղայնացված օրինակելի իրավական ակտերը, ներքին իրավական ակտերը: Դրանք վարվում են համապատասխան կարգերի պահանջներին:

Դպրոցում 2010 թվականից գործում է ՄԱԿ-ի ՊՀԾ կողմից կազմակերպած «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը: 2018 թվականի սեպտեմբերից «Դպրոցական սնունդ» ծրագիրը իրականացվում է պետբյուջի ֆինանսավորմամբ:Այն հնարավորություն է տալիս տարրական դասարաններում սովորող աշակերտներին ստանալ ճիշտ բալանսավորված սնունդ՝տարիքային առանձնահատկությունը, ֆիզիկական աճի ու մտավոր զարգացման տեմպը հաշվի առնելով:Դպրոցում ամեն տարի անցկացվում են տարաբնույթ մարզական միջոցառումներ՝ խրախուսելով առողջ

ապրելակերպը:Դպրոցը ունի բազմաթիվ մրցանակային տեղեր սպորտային մրցույթներից: Սովորողները մասնակցում են առարկայական օլիմպիադաներին, <<Կենգուրու>>, <<Մեղու>>, <<Русский медвежонок>> մրցույթներին: Դպրոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ: Դպրոցն աշխատում է 5-օրյա աշխատանքային շաբաթով:

## Դպրոցի շենքային պայմանները

| Անվանում | Քանակ | Մակերես |
|---|---|---|
| Դպրոցի շենք | 1 | 1837մ$^2$ |
| Դասասենյակ | 14 | 270 մ$^2$ |
| Ուսուցչանոց | 1 | 36 մ$^2$ |
| Ռազմագիտության կաբինետ | 1 | 21մ$^2$ |
| Համակարգչային սենյակ | 1 | 36մ$^2$ |
| Գրադարան | 1 | 21մ$^2$ |
| Բազմամասնագիտական սենյակ | 1 | 24մ$^2$ |
| Լաբորատորիա/ֆիզիկա,քիմիա | 2 | 32մ$^2$/20,35մ$^2$ |
| Ճաշարան | 1 | 56մ$^2$ |
| Մարզադահլիճ | 1 | 540մ$^2$ |
| Բացօդյա մարզահրապարակ | 1 | 2800 մ$^2$ |
| Բուժկետ | 1 | 9մ$^2$ |
| Պահեստ | 1 | |
| Սանհանգույցներ | 9 | 94 մ$^2$ |

Առաջին բուժօգնության սենյակը համլրված է գույքով: Բուժաշխատողը կցված է Մելիքյանի անվան Գյումրու թիվ 2 պոլիկլինիկայից:

**Մարդկային ռեսուրսներ և հնարավորություններ** Հնարավոր չէ պատկերացնել կրթական որևէ գործընթաց առանց մարդկային ռեսուրսների:Դպրոցում յուրաքնչյուր աշխատող՝ վարչական, մանկավարժական, ուսումնաօժանդակ, պետք է ունենան մեկ գերակա շահ՝ սովորողը:Սակայն դպրոցը հասարակությունից առանձնացված ինքնուրույն միավոր չէ և առանց համագործակցության հնարավոր չէ պատկերացնել դպրոցի զարգացումն ու աճը: Մարդկային ռեսուրսների մեջ

կարևոր տեղ են զբաղեցնում մանկավարժական աշխատողները, ուսումնաօժանդակ, սպասարկող անձնակազմը,դպրոցի կառավարման խորհուրդը,ծնողը և համայնքը: Մասնագիտական որակավորման բարձրացմանը զուգահեռ անհրաժեշտ է տիրապետել տարիքային հոգեբանությանը,հաշվի առնել սովորողների անցումային փուլերը, որոնք վառ դրսևորվում են մեկ կրթական աստիճանից մյուս կրթական աստիճան տեղափոխվելիս: Դպրոցը պետք է ունենա հոգեբան, ով պետք է աշխատի թե՛ սովորողների, թե՛ ուսուցիչների, թե՛ ծնողների հետ, որպեսզի դպրոցում ձևավորվի առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ: Անրաժեշտ է կազմակերպել մասնակցային և համագործակցային աշխատանք: Կարևոր է նույն դպրոցում աշխատող տարբեր տարիքային խմբում ընդգրկված ուսուցիչների սերտ համագործակցությունը:

## ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի 2023թ. հաստիքային ցուցակ

| **Վարչատնտեսական անձնակազմ** | |
|---|---|
| Տնօրեն | 1.0 |
| Տնօրենի տեղակալ | 1.0 |
| Վարչատնտեսական մասի համակարգող | 1.0 |
| Հաշվապահ | 1.0 |
| Տնտեսվար | 1.0 |
| **Ընդամենը** | 5.0 |
| | |
| **Ուսումնաօժանդակ անձնակազմ** | |
| Ջինդեկ | 1.0 |
| Քաղպաշտպանություն | 0,25 |
| Գրադարանավար | 1.0 |
| ԴԱԿ | 1.0 |
| Հոգեբան | 1.0 |
| Սոց.մանկավարժ | 1.0 |
| Ուսուցչի օգնական | 1.5 |
| Գործավար | 1.0 |
| **Ընդամենը** | 8.75 |
| **Սպասարկող անձնակազմ** | |
| Հավաքարար | 2,25 |
| Հավաքարար | 0,75 |

| | |
|---|---|
| Բակապան | 1,5 |
| Հնոցապան | 3.0 |
| Խոհարար | 0.5 |
| Ընդամենը | 8,0 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | 20.75 |

Ուսուցիչների դրույքի թիվը 12,2 է:

Միջին դրույքաչափը 114 158 դրամ է:

Փաստացի ուսուցիչների թիվը 16 է:

Ուսումնական հաստատության կառավարման գործում ներգրավված են կառավարման և խորհրդակցական հետևյալ մարմինները՝

1) կառավարման խորհուրդ

2) մանկավարժական խորհուրդ

3) ծնողական խորհուրդ

4)աշակերտական խորհուրդ

Չափազանց կարևոր է այս խորհուրդների դերի բարձրացումը և փոխկապակցված աշխատանքը:

**Ուսուցիչների տարիքային բաշխվածությունը**

| | **25-29տ.** | **30-39տ.** | **40-49տ.** | **50-59տ.** | **60տ. և ավելի** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|
| **2019-2020** | 2 | 4 | 1 | 2 | 6 | 15 |
| **2020-2021** | 3 | 4 | 2 | 4 | 5 | 18 |
| **2021-2022** | 2 | 4 | 1 | 3 | 7 | 17 |
| **2022-2023** | ---- | 6 | 2 | 2 | 8 | 18 |
| **2023-2024** | ---- | 5 | 2 | 2 | 7 | 16 |

### Վարչական աշխատողների քանակը

| 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 | 2023-2024 |
|---|---|---|---|---|
| 3 | 2 | 2 | 2 | 3 |

### Աշակերտների բաշխվածությունը ըստ տարիների

| 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 | 2023-2024 |
|---|---|---|---|---|
| 195 | 197 | 170 | 168 | 162 |

### Վերջին երեք տարում սովորողների շարժը ըստ կիսամյակների

| | 2020-2021 ուստարի | | 2021-2022 ուստարի | | 2022-2023 Ուստարի | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդունված | Ազատված | Ընդունված | Ազատված | Ընդունված | Ազատված |
| **I կիսամյակ** | 11 | 9 | 3 | 3 | 4 | 3 |
| **II կիսամյակ** | 0 | 0 | 5 | 4 | 4 | 4 |

Ըստ գծապատկերների պարզ է դառնում , որ ուսուցչական անձնակազմը համալրված է միջն տարիքից բարձր աշխատակիցներով, իսկ աշակերտական համակազմը վերջին երկու ուստարիներին կտրուկ նվազել է:Դպրոցի միայն մեկ ուսուցիչ ունի առաջին աստիճանի տարակարգ:Դպրոցի առաջնահերթ խնդիրներից է ուսուցիչներին խրախուսելու տարբեր ձևեր գտնելը, որը ուղիղ համեմատական կլինի ուսուցչի աշխատանքի որակի բարելավմանը և կրթության որակի բարձրացմանը:

## 2.Իրավիճակի վերլուծություն. ուժեղ և թույլ կողմեր

Դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար նախ անհրաժեշտ է վերլուծել առկա իրավիճակը, բացահայտել ուժեղ և թույլ կողմերը, վերհանել առկա հիմնախնդիրները:

Վերլուծությունը համակարգված իրականացնելու համար նպատակահարմար է այն կատարել ըստ որոշակի ոլորտների՝ առավելագույնս ընդգծելով դպրոցի ուժեղ և թույլ կողմերը:

## 2.1 Հաստատության շենքային պայմաններ

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Թեև դպրոցը գործում է 1963թ.-ից, սակայն տվյալ շենքում տեղակայվել է 2000թ.Դպրոցի շենքը տիպային է, երկհարկանի:Դպրոցի տանիքը  նս վերանորոգված է:<br>• Քանի որ դպրոցն անցել է կառավարման նոր մոդելի, վարչատնտեսական համակարգողը դպրոցի երկու հարկում էլ տեղակայել է մեծ հզորությամբ օդորակիչներ, որոնք թույլ կտան ձմռան ամիսներին դպրոցի միջանցքներում պահպանել անհրաժեշտ ջերմաստիճան:<br>• Դպրոցի տարածքը առանձնացված է ցանկապատով, բակը կանաչապատված է և ասֆալտապատված:Ապահովված է սովորողների անվտանգ տեղաշարժը բակի տարածքում:<br>• Դպրոցում առկա են 14 դասասենյակ, երեք առանձնասենյակ՝ նախատեսված տնօրենի, վարչատնտեսական համակարգողի, բազմամասնագիտական թիմի համար, 1համակարգչային կաբինետ, 1 ԱՐՄԱՏ լաբորատորիա, որը տեղակայված է համակարգչային կաբինետում, 1 ՆԶՊ կաբինետ, 1 գրադարան, 1 բուժկետ, 1 խոհանոց, 1 ճաշարան, 9 սանհանգույց:<br>• Դպրոցն ունի բացօդյա սպորտհրապարակ, կահավորված | Դպրոցում կա երկու լաբորատորիա, որոնք կահավորված չեն:<br><br>Դպրոցում առկա 9 սանհանգույցից աշխատում է միայն 5-ը:<br><br>Դպրոցը չունի նկուղ և ապաստարան:<br><br>Դպրոցի մուտքերից մեկը ունի թեքահարթակ, սակայն դպրոցի ներսում ԿԱՊԿՈՒ սովորողը, ով ունի հենաշարժողական խնդիրներ  չի կարող ազատ տեղաշարժվել , |

| | |
|---|---|
| մարզադահլիճ՝ ապահովված հանդերձարաններով, ուսուցչի սենյակով, որն ըստ անհրաժեշտության կարող է ծառայել նաև որպես հանդիսությունների դահլիճ:<br>• Դպրոցն ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով, եռաֆազ հոսանքով, տարահանման 3 ելքերով: Դպրոցի ճաշարանը և խոհանոցը նույնպես ջեռուցվում են :<br>• Դպրոցի առաջին հարկի պատուհանները փոխված են դրամաշնորհային ծրագրի միջոցով:<br>• Մեկ սանհանգույց հարմարեցված է տեղաշարժման սահանափակ հնարավորություններ ունեցող ԿԱՊԿՈՒ սովորողների համար:<br>• Դպրոցում պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը:<br>• Դպրոցն ունի տեսախցիկներ | բարձրանալ երկրորդ հարկ, օգտվել գրադարանից: Հետևաբար խախտվում է սովորողի հավասար պայմաններում կրթություն ստանալու իրավունքը:<br>Դպրոցը չունի հրաձգարան:<br>Կրակմարիչների թիվը 2 է, որը չափազանց քիչ է: |

| Նպատակ | Խնդիր | Գործողություն | Ժամկետներ | Պատասխանատուներ | Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, նյութատեխնիկական պարագաներ, մարդկային ռեսուրսներ | Ռիսկեր | Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքանող գործողություններ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պահպանել ձեռքբերումները Կատարել խելամիտ հարմարեցումներ ԿԱՊԿՈՒ սովորողների համար | 1.Սանհանգույցների վերանորոգում<br>2.Դեպի երկրորդ հարկԿԱՊԿ ՈՒ սովորողների տեղաշարժման հնարավորությունների ստեղծում<br>3.Լաբորատորիաների կահավորում | ա)Սանհանգույցների վերանորոգում<br>բ) Դեպի երկրորդ հարկ ԿԱՊԿՈՒ սովորողների տեղաշարժման հնարավորությունների ստեղծում<br>փորձանյութերի գնում,լաբորատոր գույքի ձեռքբերում | 2023-2024<br>2023-2024<br>2023-2025 | Վարչատնտեսական համակարգող լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, տնօրեն | Կրթության շահագրգիռ կողմերի ներգրավում, ֆինանսական միջոցների ներդրում լիազոր մարմին, դրամաշնորհա յին ծրագրեր, բարերարներ, արտաբյուջետային միջոցներ: | Աշակերտ թվի նախատեսվածից քիչ աճ<br>Ոչ բավարար պետական բյուջե<br>Դպրոցի՝ լրացուցիչ աղբյուրներից ֆինասավորման բացակայություն<br>Շենքի մաշվածության չափի ավելացում<br>Նպատակային ներդրումներ | Արդյունավետ համագործակցություն համակարգողի հետ<br>Բարեգործական նպատակային ներդրումներ /խելամիտ և իրատեսական առաջարկություններ/<br>Հիմնադրի սահմանած ձեռնարկատիրական գործունեություննե |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | պակաս կամ բացակայություն Բարեգործությունների պակաս կամ բացակայություն | րի իրականացում Դպրոցի տարածքների վարձակալության հիմունքներով հանձնում,որպես լրացուցիչ ֆինանսական միջոցներ |

## Հաստատության նյութատեխնիկական բազան

Դպրոցի նյութատեխնիկական բազան, որն անհրաժեշտ է կրթական, հետազոտական, ստեղծագործական գործունեության և կրթության բնագավառի այլ խնդիրների լուծման համար, ստեղծվել և զարգացվում է բյուջետային, ինչպես նաև սեփական, համագործակցության և բարեգործության միջոցներով: Ուսումնական հաստատության ուսումնանյութական բազան նյութական և տեխնիկական միջոցների համալիրն է, որը նախատեսված է պետական կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի և պլանավորումների համապատասխան սովորողների պատրաստման ապահովմանը:

**Այստեղ ներկայցնում ենք դպրոցի ամբողջ գույքացանկը ըստ ձեռքբերման տարեթվերի, որից պարզ է դառնում, թե ի՞նչ գույք է առկա, և ինչի՞ կարիք ունի դպրոցը՝ ո՞ր գույքն է ենթակա փոխելու կամ վերազինելու**:

| N | Օբյեկտի անվանումը և համառոտ բնութագիրը | Թողարկման (կառուցման) տարեթիվը | Քանակը |
|---|---|---|---|
| 1 | Դպրոցական շենք | 2000 | 1 |
| 2 | Մարզական և հանդիսությունների դահլիճ | 2007 | 1 |
| 3 | Հեռուստացույց | 1995 | 1 |
| 4 | Հեռուստացույց | 2007 | 1 |
| 5 | Նվագարկիչ DVD | 2002 | 1 |
| 6 | Դաշնամուր <<Սևան>> | 2002 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 7 | Կարի մեքենա <<Չայկա142>> | 1982 | 1 |
| 8 | Կարի մեքենա <<Պադոլսկ>> | 1982 | 1 |
| 9 | Երաժշտական կենտրոն | 2007 | 1 |
| 10 | Էլեկտրական սալիկ ջեռոց | 2007 | 1 |
| 11 | Սառնարան | 2007 | 1 |
| 12 | Սեղան սառեցումով | 2007 | 1 |
| 13 | Միկրոալիքային վառարան | 2007 | 1 |
| 14 | Էլեկտրական ջրատաքացուցիչ | 2007 | 3 |
| 15 | Ներժավե սեղան 1200*600 | 2018 | 1 |
| 16 | Ներժավե սեղան 1200*500 | 2018 | 2 |
| 17 | Ջրատաքացուցիչ  30 լիտր տարողությամբ | 2018 | 1 |
| 18 | Սառնարան 250-300լ տարողությամբ | 2018 | 1 |
| 19 | Էլեկտրական կշեռք | 2018 | 1 |
| 20 | Ջրի դիսպանսեր | 2018 | 1 |
| 21 | Սառնարան վիտրինա | 2018 | 1 |
| 22 | Աշակերտական  նստ.(մոխրագույն) | | 60 |
| 23 | Գրասեղան (Կարիտաս) | 2001 | 2 |
| 24 | Գրատախտակ (Կարիտաս) | 2001 | 13 |
| 25 | Գրասեղան ՝ տնօրենի | 2001 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 26 | Ուսուցչի սեղան | 2001 | 8 |
| 27 | Գրապահարան | 2001 | 10 |
| 28 | Աշակ. Սեղան-նստարան | 2001 | 53 |
| 29 | Աշակերտական սեղան | 2001 | 10 |
| 30 | Ուսուցչի սեղան | 2001 | 1 |
| 31 | Ուսուցչի գրասեղան | 2001 | 5 |
| 32 | Ուսուցչի պահարան | 2007 | 3 զույգ |
| 33 | Համակցված պահարան | 2007 | 2 զույգ |
| 34 | Ամանների լբացարան | 2007 | 1 |
| 35 | Բուֆետի վաճառասեղան | 2007 | 1 |
| 40 | Ձեռքի զնդակի դարպաս | 2007 | 2 |
| 41 | 4-տեղանի ճաշասեղան- աթոռ | 2007 | 9 կոմպլեկտ |
| 42 | Պահարան | 2007 | 2 |
| 43 | Ուսուցչի սեղան | 2007 | 2 |
| 44 | Գորգ (3x4) | 2007 | 24 քմ |
| 45 | Գորգ (2x3) | 2007 | 24 քմ |
| 46 | Գորգ (3x5) | 2007 | 15 քմ |
| 47 | Պահարան | 2001 | 3 |
| 48 | Ուսուցչի սեղան | 2001 | 2 |

| | | | |
|---|---|---|---|
| 49 | Ուսուցչի աթոռ | 2001 | 2 |
| 50 | Բազկաթոռ | 2001 | 5 |
| 51 | Սայլակ | 2001 | 1 |
| 52 | Ժամացույց | 2001 | 3 |
| 53 | Սեղան աշակերտական (21տեղ.) | 2001 | 52 |
| 54 | Սեղան աշակերտական (2 տեղ.) | 2001 | 8 |
| 55 | Աթոռներ տարբեր տեսակի | 2001 | 35 |
| 56 | Գրասեղան | 2001 | 2 |
| 57 | Պահարան | 2001 | 3 |
| 58 | Գրասեղան | 2001 | 8 |
| 59 | Էլեկտրական ջրատաքացուցիչ | 2001 | 1 |
| 60 | Շախմատ | 2013 | 4 |
| 61 | Պաստառ ՆԶՊ | 2001 | 1 կոմպ. |
| 62 | Ալեհավաք | 2001 | 1 |
| 63 | Աթոռ (Կարիտաս) | 2001 | 12 |
| 64 | Կրակմարիչ | 2001 | 4 |
| 65 | Համակարգչայի սեղան | 2005 | 6 |
| 66 | Տումբա՝ տնօրենի | 2013 | 1 |
| 67 | Աշակերտական աթոռ | 2001 | 20 |

| | | | |
|---|---|---|---|
| 68 | Կափարիչով աղբաման | 2001 | 2 |
| 69 | Կախիչ | 2001 | 2 |
| 70 | Աշակերտական սեղան | 2001 | 10 |
| 71 | Աշակերտական աթոռ | 2001 | 20 |
| 72 | Կլոր սեղան | 2001 | 2 |
| 73 | Գրատախտակ | 2001 | 10 |
| 74 | Երկկողմանի կախիչ | 2001 | 2 |
| 75 | Արտադրական սեղան | 2001 | 1 |
| 76 | Արտադրական դարակաշար | 2001 | 1 |
| 77 | Դահլիճի աթոռ | 2007 | 136 |
| 78 | Կիսափափուկ աթոռ | 2007 | 12 |
| 79 | Մարզաձողան | 2007 | 2 |
| 80 | Նստարան զգեստ փոխելու | 2007 | 8 |
| 81 | Մարզագույքի դարակաշար | 2007 | 2 |
| 82 | Միակողմանի պատի կախիչ | 2007 | 4 |
| 83 | Բահ | 2001 | 4 |
| 84 | Քլունգ | 2001 | 1 |
| 85 | Մանկական սպորտային ժիլետ | 2001 | 8 |
| 86 | Ձագար | 2001 | 10 |

| | | | |
|---|---|---|---|
| 87 | Կոն | 2001 | 5 |
| 88 | Օղակ | 2001 | 5 |
| 89 | Ձող | 2001 | 2 |
| 90 | Կրակմարիչ | 2001 | 2 |
| 91 | Շախմատի սեղան-աթոռ | 2013 | 12 |
| 92 | Շերտավարագույր | 2015 | 45 քմ |
| 93 | Տոնածառ | 2015 | 1 |
| 94 | Համակարգիչ CPU5700 | 2012 | 1 |
| 95 | Ուսուցչական սեղան | 2009 | 2 |
| 96 | Սեղան՝ խաղային,կլոր | 2008 | 2 |
| 97 | Սեղան ուսուցչի | 2008 | 3 |
| 98 | Սեղան աշակերտի | 2008 | 10 |
| 99 | Աթոռ աշակերտի | 2008 | 20 |
| 100 | Պահարան | 2009 | 4 |
| 101 | Ուսուցչական աթոռ | 2008 | 3 |
| 102 | Ուսուցչական աթոռ | 2009 | 2 |
| 103 | Տարրական դաս. Աշխ. Գույք | 2011 | 12 |
| 104 | Փոշեկուլ Panasonic | 2016 | 1 |
| 105 | Աթոռ | 2017 | 6 |

| | | | |
|---|---|---|---|
| 106 | Համակարգիչ | 2012 | 1 |
| 107 | Բազմաֆունկցիոնալ տպիչ | 2012 | 1 |
| 108 | Հոսանքի անխափան սնուցման սարք (UPS) | 2012 | 1 |
| 109 | Համակարգիչ | 2012 | 2 |
| 110 | Համակարգիչ (PEN4 Ա խումբ) | 2012 | 4 |
| 111 | Համակարգիչ (PEN4 Բ խումբ) | 2012 | 1 |
| 112 | Սկաներ | 2012 | 1 |
| 113 | Ինտերակտիվ պրոեկտոր optomaw319USTire Տեխնոլոգիան-DLP տեսակը | 2019 | 1 |
| 114 | Լազերային տպիչ | 2012 | 1 |
| 115 | Հաբ 16 | 2012 | 1 |
| 116 | Համակարգիչ (PEN4) | 2010 | 1 |
| 117 | Մինի համակարգչային հավաքածու | 2019 | 5 |
| 118 | Համակարգչի հավաքածու եռաչափ տպիչի համար | 2019 | 1 |
| 119 | Համակարգչի հավաքածու  շաղափային և լազերային հաստոցի | 2019 | 1 |
| 120 | Համակարգչային  սեղան 1 | 2019 | 1 |
| 121 | Համակարգչային  սեղան 2 | 2019 | 1 |
| 122 | Համակարգչային  սեղան 3 | 2019 | 6 |
| 123 | Համակարգչային աթոռ | 2019 | 16 |
| 124 | Եռաչափ տպիչ Բզեզ 2.0 | 2019 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 125 | Փոշեկուլ GORENJE VC1411 | 2019 | 1 |
| 126 | Ռոբոտ կոնստրուկտորի հիմնական հավաքածու | 2019 | 1 |
| 127 | Նորացման  և գործիքների լրացուցիչ հավաքածու | 2019 | 1 |
| 128 | Ռոբոտի տեխնիկական էլեկտրոնային հանգույցների լրացուցիչ հավաքածու | 2019 | 1 |
| 129 | Ավտոմատացման և էլեկտրոնիկայի ընդլայնման հավաքածու | 2019 | 1 |
| 130 | Թվային կառավարման շաղափային և լազերային հաստոց | 2019 | 1 |
| 131 | Համակարգիչ | 2022 | 1 |

| Ուժեղ  կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| 1.Վերը նշված ցանկից պարզ է դառնում, որ դպրոցն ունի անհարժեշտ նյութատեխնիկական բազա:<br>2. ԱՐՄԱԹ լաբորատորիան հագեցած է վերջին սերնդի համակարգիչներով և ծառայում է իր նպատակին:<br>3.Դպրոցն ունի երկու լաբորատորիա:<br>4.Դպրոցն ունի համակարգչային կաբինետ | 1.Նյութատեխնիկական բազայի մեծ մասը ֆիզիկապես մաշված է, չի համապատասխանում ժամանակի պահանջներին:<br>2.Լաբորատոր գույքը մաշված է:<br>3. Համակարգիչների զգալի մասը 2010-2012թթ. են,հաճախ կարիք է առաջանում վերանորոգելու:<br>4.Ներառական կրթություն կազմակերպելու համար դիդակտիկ սարքեր,նյութեր |

| Նպատակ | Խնդիր | Գործողություն | Ժամկետ ներ | Պատասխանատու ներ | Գործողություննե րի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, նյութատեխնիկական պարագաներ, մարդ-կային ռեսուրսներ | Ռիսկեր | Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողությո ւններ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պահպանել և կատարելագործել արդեն իսկ ունեցած | 1.Համակարգիչների և համակարգչային ծրագրերի արդիականացում | Նորոգել դպրոցում առկա համակարգիչները և ձեռք բերել նոր սերնդի | 2023-2028թթ. Յուրաք անչյուր տարի | վարչատնտեսա-կան համակարգող, | Կրթության շահագրգիռ կողմերի ներգրավում, ֆինանսական | Ոչ բավարար պետական բյուջե Դպրոցի՝ լրացուցիչ | ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների ու |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| նյութատեխնիկական բազան:<br><br>Ժամանակի ընթացքում փոխել մաշված գույքը նոր, ժամանակի պահանջներին համապատասխան գույքով: | Լաբորատոր գույքի և նյութերի թարմացում, ձեռքբերում:<br><br>3.Թույլ տեսնող նլսողության խնդիր ունեցո ղոսվորողների համար խելամիտ հարմարեցումներ.<br><br>Գրադարանի համալրվածությունը ուսումնանյութական ձեռնարկներով և գեղարվեստական գրքերոց քիչ է (372կտոր գիրք)<br><br>Ընթերցասրահի բացակայություն<br><br>: | համակարգիչներ<br><br>Լաբորատորիաները ապահովել փորձարարական նյութերով<br><br>Ստեղծել ռեսուրս սենյակ, կահավորել անհրաժեշտ գույքով և ուսումնական նյութերով<br><br>Առաջին դասարանցիներին որպես էքսկուրսիա տանել դպրոցի գրադարան: Գրադարանում կազմակերպել հեքիաթների ընթեցում և փոքրիկ բեմականացում սիրելի հերոսների կերպարներով:<br><br>Միջին դպրոցի սովորողների միջոցով կատարել վնասված գրքերի նորոգում, վերականգնում | 2023-2024թթ<br><br>2023-2024թթ<br><br>2023-2028յուրաքանչ-յուր տարի | տնօրեն,<br><br>գրադարանավար<br><br>վարչատնտեսա-կան համակարգող, տնօրեն,<br><br>Հիմնադիր, լիազոր մարմին, կառավարման խորհուրդ<br><br>Հիմնադիր, լիազոր մարմին, կառավարման խորհուրդ | միջոցների ներդրում<br><br>Հիմնադիր, լիազոր մարմին, վարչտնտե-սական համակարգող, դրամաշնորհային ծրագրեր, հովանավորներ, բարերարներ, արտա բյուջետային միջոցներ: | աղբյուրներից ֆինանսավորման բացակայություն<br><br>Ուսումնանյութական բազայի մաշվածության չափի ավելացում<br><br>ՈՒսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտ կարիքների ոչ ճիշտ գնահատում և ներկայացնում<br><br>Նպատակային ներդրումների պակաս կամ բացակայություն | կազմակերպությունների նվիրատվություններ /խելամիտ և իրատեսական առաջարկություններ/<br><br>Արդյունավետ համագործակցություն համակարգողի հետ<br><br>Համագործակցություն մարզպետարանի հետ դպրոցահասակ երեխաների դպրոց ընդգրկելուն, ինչպես նաև շենքային և նյութատեխնիկական բազայի համալրում՝ իր լիազորությունների շրջանակներում |

## Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն

Դպրոցի կառավարման մարմիններն են՝ հիմնադիրը, ԿԳՄՍ նախարարությունը, տարածքային կառավարման մարմինը /այսուհետ՝ լիազորված մարմին/, կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը գործադիր մարմինը՝ տնօրենը և վարչատնտեսական մասի համակարգողը այսուհետ համակարգող/:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| Տնօրենը՝<br><br>1.Խորհրդի հավանությանն և քննարկման է ներկայացնում ուսումնադաստիարակչական գործունեության, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում ԿԱՊԿՈՒ սովորողների կազմը, ներքին և արտաքին գնահատման հաշվետվությունները<br><br>2.Առնվազն երկու անգամ ներկայացնում է զարգացման ծրագրի կատարման հաշվետվությունները: Խորհրդի կողմից տրվում է եզրակացություն: | Խորհրդի կողմից՝<br><br>1.Զարգացման ծրագրի կատարման աջակցության, նախաձեռնողականության պասիվություն |

| | |
|---|---|
| 3.Հաստատման է ներկայացնում՝ դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները, կարգի համաձայն տնօրենի կողմից մշակված՝ ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը:<br><br>4.Խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում խորհրդի նիստերին:<br><br>5.Ապահովում խորհրդի իրավական հիմք ունեցող որշումները Պետական ուսումնական հաստատության խորհուրդը՝<br>1) աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տալիս եզրակացություն.<br>2) հաստատում է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները.<br>3) քննարկում է ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները.<br>4) քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները.<br>5) լիազորված մարմին է ներկայացնում առաջարկություններ՝ ուսումնական հաստատության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան.<br>6) հաստատում է իր աշխատակարգը, նիստերի օրակարգը, ժամանակացույցը և ընտրում խորհրդի նախագահ.<br>7) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն տրված եզրակացության հիման վրա խորհրդի անդամների (մանկավարժական և ծնողական խորհուրդների դեպքում՝ միայն տվյալ հաստատության մանկավարժական և ծնողական խորհուրդների առաջադրած անդամների) ընդհանուր թվի երկու երրորդի համաձայնությամբ, հիմք ընդունելով լիազոր մարմնի սահմանած կատարողական ցուցանիշներն ու պահանջները, կարող է անվստահություն հայտնել տնօրենին և նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին հիմնավոր առաջարկությամբ դիմել համապատասխան լիազոր մարմնի ղեկավարին. | |

| Նպատակ | Խնդիր | Գործողություն | Ժամկետներ | Պատասխանատուներ | Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, նյութատեխնիկական պարագաներ, մարդ-կային ռեսուրսներ | Ռիսկեր | Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1.Կառավարման խորհրդի դերի բարձրացում<br>2.Տնօրենի և կառավարման խորհրդի բազմաշերտ և բազմակողմանի համագործակցություն օրենքով սահմանված կարգով | 1.ծառացած խնդիրների լուծման առաջարկների պակաս<br>2.Ուսման որակի բարելավման համար առաջարկվող լուծումներ | 1.կառավարմանխորհրդի նիստում հանդես գալ առաջարկություններով, լինել նախաձեռնող , պահանջատեր և հետևողական<br>2.Կազմակերպել սեմինարներ խորհրդի անդամներին իրազեկ դարձնելով հանրակրթության ոլորտում իրականացվող փոփոխություններին<br>3.նպաստել հանրակրթական դպրոցի կողմից իրականացվող լրացուցիչ, ինչպես նաև օրենքին և հանրակրթական դպրոցի կանոնադրությանը չհակասող այլ ծրագրերի իրականացմանը | 2023-2024<br>2023-2028<br>Յուրաքան<br>չյուր<br>ուստարի<br>2023-2025 | Տնօրեն<br>Կառավարման խորհուրդ<br>Վարչատնտեսական համակարգող<br>Տնօրեն<br>Կառավարման խորհուրդ<br>Վարչատնտեսա<br>կան համակարգող<br>Տնօրեն<br>Կառավարման խորհուրդ<br>Վարչատնտեսական համակարգող | Կառավարման խորհուրդ Տնօրեն | 1.Ոչ արդյունավետ համագործակցություն<br>2.Շահագրգիռ կողմերի չներկայանալը որպես կարևոր դերակատարում ունեցող կողմեր<br>3.Ժամանակավրեպ որոշումների, գործողությունների իրականացում<br>4.կառավարման խորհրդի նախաձեռնողականության պասիվություն | 1.Համագործակցության շրջանակներում մասնակցային որոշումների կայացման և հանդուրժողականության բազմակարծության հետևողականության ապահովում<br>2.Աշխատանքների կազմակերպումը կողմերին հարմար ժամերին, օգտվել հեռավար կապի միջոցներից<br>3. Արդյունավե տ համագործության համար տվյալ ժամանակի առաջնահերթ խնդիրների ներկայացում<br>4.Համագործակցությ ան արդյ ունքում կայացված որոշումների և տարբեր ծրագրերի ժամանակին իրականացում |

## Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, ծնողական համայնքի, շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման և սովորողներին ու մանկավարժներին հասարակական կյանքին ակտիվորեն ներգրավելու համար անհրաժեշտ է մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Դպրոցն համագործակցում ԷՀՀ Կառավարության, ՀՀ ԿԳՄՍ նախարարության,ԿՏԱԿ-ի,ՀՀ Ներքին գործերի ոստիկանության, Գյումրու ՏՄԱԿ-ի, ԿՋՆԱԿ-ի,տեղական ինքնակառավարման մարմինների, ԳԹԿ-ի, <<Հուսո կամուրջ>>, <<Փոքրիկ Իշխան>> հկ-ների,արվեստի դպրոցների, հարակից ավագ դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ<br>• Դպրոցի անձնակազմը և աշակերտական համակազմը մասնակցում է համայնքային և մարզային բազմապրոֆիլ միջոցառումների՝ օլիմպիադաներ, շաբաթօրյակներ, սպորտային տարատեսակ միջոցառումներ և այլն<br>• Ծնողական խորհուրդը մասնակցում է արտադասարանական միջոցառումներին՝ օժանդակելով դրանց ծրագրմանն ու իրագործմանը | • Դպրոցը չունի շրջանավարտների, հոգաբարձուների խորհուրդ, ինչպես նաև բարերարներ, որպեսզի լուծվեն արտադպրոցական միջոցառումների ֆինանսավորման հարցը<br>• Ծնողները նախաձեռնող չեն |

| Նպատակ | Խնդիր | Գործողություն | Ժամկետներ | Պատասխանատուներ | Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, նյութատեխնիկական պարագաներ, մարդ-կային ռեսուրսներ | Ռիսկեր | Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Սովորողներին պատրաստել ինքնուրույնության և նպաստել սոցիալականացմանը,դարձնել նախաձեռնող | Համագործակցել բոլոր կառույցների հետ, որոնք ապահովում են կրթության որակ, նպաստում են քաղաքացիական հասարակության ձևավորմանը | 1.Կրթության կառավարման լիազորված մարմնի, համայնքի և շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ոլորտի ընդլայնում<br>2.Համագործակցության ընթացքում կազմակերպել գեղագիտական, մարզական միջոցառումներ | 2023-2028թթ. Յուրաքնչյուր տարի ըստ համադպրոցական տարեկան աշխատանքային պլանի | Տնօրեն<br>Համակարգող<br>Տնօրենի տեղ. Ուս. գծով<br>Տնօրենի ՄԿԱ գծով տեղ.<br>Մանկավարժական խորհուրդ<br>Ծնողական խորհուրդ<br>Աշակերտական խորհուրդ | | 1.Պասիվություն՝ ծանրաբեռնված աշխատանքի կամ այլ պատճառներով<br>2.Ոչ արդյունավետ համագործակցություն<br>3.Շահագրգիռ կողմերի չներկայանալը որպես կարևոր դերակատարում ունեցող կողմեր<br>4.Ժամանակավրեպ որոշումների, գործողություններ ի իրականացում<br>5.Վստահության պակաս | 1.Դպրոց-համայնք՝ որպես մեկ ամբողջական հասարակություն ում ժողովրդավարության ապահովում և ամրապնդում<br>2.Համագործակցության շրջանակներում մասնակցային որոշումների կայացման և հանդուրժողականության բազմակարծության և հետևողականության ապահովում<br>3.Կատարված ֆինասական և |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 6.Ոչ պետական մտածելակերպ և անտարբերություն<br>7.Մխ ,Ծխ, Ախ, Կխ կառավարման և խորհրդակցական մարմինների նախաձեռնողականության պասիվություն | նյութական ներդրումների, բարեգործությունների հանրայնացում և հաշվետվողունակության թափանցիկության ապահովում<br>4.Համագործակցության արդյունքում կայացված որոշումների և տարբեր ծրագրերի ժամանակին իրականացում<br>5.Աշխատանքների կազմակերպումը կողմերին հարմար ժամերին, օգտվել հեռավար կապի միջոցներից<br>6.Արդյունավետ համագործության համար տվյալ ժամանակի առաջնահերթ խնդիրների ներկայացում |

## Մանկավարժական համակազմի մասնագիտական որակներիներկայացումը

Ուսուցիչները և աշակերտները մեկ միասնական համակարգ են, և նրանց գործունեությունը փոխկապակցված է:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| 1.Բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն կրթություն:<br>2.Դպրոցն ունի համակարգչային կաբինետ, ինչպես նաև տարաբնույթ դիդակտիկ պարագաներ , որոնք օգնում են դասերն առավել արդյունավետ կազմակերպել:<br>3.Դպրոցն ուսումնադաստիարակչական տարեկան աշխատանքային պլան կազմելիս ապահովում է աշակերտակենտրոն մոտեցում:<br>4.Դպրոցը մասնակցում է ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպվող և անցկացվող բոլոր սեմինարներին և վերապատրաստումներին:<br>5.Կազմակերպվում են տարբեր թեմատիկ միջոցառումներ,նպատակային էքսկուրսիաներ :<br>6. Կազմակերպվում բաց դասեր՝ ՏՀՏ կիրառմամբ,լաբորատոր և գործնական աշխատանքների միջոցով: | 1.Կա մասնագիտական մեթոդական խորհրդատվության պակաս:<br>2.Առարկայական մասնախմբերը չեն համագործակցում հարակից դպրոցների մ/մ-ների հետ:<br>3.Լաբորատորիաների գույքը ֆիզիկապես մաշված է<br>4.Ընդամենը մեկ ուսուցիչ ունի տարակարգ և խուսափում են կամավոր ատեստավորումից:<br>5.Ուսուցիչները դեռևս դժվարանում են օգտվել համակարգչային տարբեր ծրագրերից<br>6.Ուսուցիչները դեռևս չեն տիրապետում նոր ՀՊՉ-ին թեև անցել են վերապատրաստում:<br>7.Կա ուսուցիչների շարունակական ինքնակրթվելու պակաս: |

| Նպատակ | Խնդիր | Գործողություն | Ժամկետներ | Պատասխանատուներ | Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, նյութատեխնիկական պարագաներ, մարդ-կային ռեսուրսներ | Ռիսկեր | Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1.Դպրոցի մանկավարժական համակազմի որակական բարելավում, որը դպրոցի ռազմավարությունններից մեկն է: Այն ենթադրում է 16 փետրվարի 2023 թվականի N 216-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների կատարում:<br>2.Դասավանդման արդյունավետության բարձրացում,ուսման որակի բարելավում<br>3.Համակարգչային գրագիտության և ՏՀՏ կիրառման կարողությունների բարձրացում<br>4.Համընդհանուր ներառական կրթության կազմակերպման հմտությունների զարգացում | 1.Ուսուցիչների շարունակական ինքնակրթմանը ուղղված աշխատանքների կազմակերպում<br>2.Ուսուցիչների հեղինակության և դերի բարձրացում<br>3.Ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավում<br>4.Աշխատանքի նկատմամբ մոտիվացիայի բարձրացում<br>5.Տարբեր կարիք ունեցող սովորողների, ուսումնական գործընթացին մասնակցության աճ | 1.Պետական պարտադիր ատեստավորման վերապատրաստումներից բացի՝ Դպրոցի նախաձեռնությամբ մասնագիտական վերապատրաստումների, սեմինարների, քննարկումների իրականացում<br>2.Որակավորման տարակարգ չունեցող, սկսնակ ուսուցիչներին նախապատրաստել ատեստավորման:<br>3.Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական -մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ:<br>4.Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, մանկավարժական մեթոդական ընթերցումներ:<br>5.Նպաստել ուսուցիչների որակավորման բարձացմանը՝ ՝կազմակերպելով համակարգչային գրագիտությանն ուղղված | 2023-2028թթ. Յուրաքնչյուր ուստարի<br>2023-2028թթ. Յուրաքնչյուր ուստարի<br>2023-2028թթ. Յուրաքնչյուր ուստարի<br>Յուրաքնչյուր ուստարի | Տնօրեն<br>Տնօրենի տեղ. Ուս. գծով<br>Տնօրենի ՄԿԱ գծով տեղ.<br>Մանկավարժական խորհուրդ<br>մ/մ,մենթոր դպրոցներ | ԿԳՄՍ, ԿԶՆԱԿ, լիազոր մարմին, ՀՄԿ, ՏՄԱԿ, Պետբյուջեից ֆինանսավորում տարակարգի,կամավոր ատեստավորման համար | 1.ՈՒսուցիչների մասնագիտական, մեթոդամանկավարժական կարողությունների, շահագրգռվածության պակաս<br>2.Նորարարությունների ներդրման ինքնավստահության պակաս<br>3.Ժամանակակից տեղեկատվական հաղորդակցման և տեխնոլոգիաների կիրառության կարողունակությունների պակաս<br>4.Ինքնակրթության և ինքնազարգացման մոտիվացիայի պակաս<br>5.Օրենսդրության տեղեկատվության պակաս<br>6.Համապատասխան ֆինանսական միջոցների պակաս<br>6.Նյութատեխնիկական, ուսումնամեթոդական բազայի ուսուցման բովանդակությանը ոչ համապատասխան լինելը<br>7.Մանկավարժների բացասական վերաբերմունքը դպրոցի ընդհանուր գործունեությանը | 1.Պետական պարտադիր ատեստավորման վերապատրաստումներից բացի Դպրոցի նախաձեռնությամբ նաև մասնագիտական, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման, ուսուցման գործընթացի օրենսդրության իմացության սեմինարների, քննարկումների և վերապատրաստումների իրականացում:<br>2.Ինքնակրթության և ինքնազարգացման համապատասխան միջավայրի և գործիքների տրամադրում և մոտիվացիայի տարբեր ձևերի կիրառում (պարգևատրումներ,խրախուսումներ,պատվոգրեր և այլն):<br>3.Մանկավարժների բազմակարծության, նրանց՝ դպրոցի ընդհանուր գործունեության որոշումների կայացման, կազմակերպման և |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | գործնական դասընթացներ:<br><br>6.Ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, ձեռք բերել ոչ միայն նոր համակարգիչներ, այլև էլեկտրոնային գրատախտակ:<br><br>7.Ուսուցիչների արդյունավետության գնահատում և լավագույն ուսուցիչների խրախուսում(բազմաբնույթ ուսումնասիրություններ, շնորհակալագրեր, պատվոգրեր և այլն) | Յուրաքնչյուր ուստարի<br><br>2023-2025թթ.<br><br>Յուրաքանչյուր ուստարվ ա վերջին | | | | իրականացման գործում մասնակցային դրսևորումների և դիրքորոշումների ապահովում և խրախուսում<br>4.Նյութատեխնիկական բազայի ուսուցման բովանդակությանը համապատասխանեցնելու գործողություններ ԴԶԾ-ում նշված տարբեր միջոցառումների իրականացման միջոցով կազմակերպում<br>5.Ֆինանսական միջոցների պակասի լրացում՝ այն կազմակերպելով ԴԶԾ-ում նշված տարբեր միջոցառումների իրականացմամբ: |

## Հաստատության կողմից օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը

Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաները հասարակական կյանքի ամենակարևոր տարրերն են, իսկ գիտելիքն ու տեղեկությունը՝ առաջընթացի որոշիչ գործոն: ՈՒստի կրթական նոր տեխնոլոգիաների զարգացմամբ պետք է խթանել դասավանդման նոր մեթոդների և ուսուցման նոր ձևերի մշակումը: ՏՀՏ–ի միջոցով կատարելագործել դասավանդման որակը, բարձրացնել սովորողների առաջադիմությունը,կատարել գիտելիքների շարունակական նորացում:

Կարևորելով ՏՀՏ տեխնոլոգիաների ներդնումը դասապրոցեսում՝ դպրոցի ուսուցիչները օգտագործում են էլեկտրոնային տարբեր էական ռեսուրսներ: ՈՒսուցման ընթացքում ուսուցիչները կիրառում են թիմային, խմբային աշխատանքներ,ուսուցման նախագծային մեթոդներ, շրջված դասարան մոդելը, պրոբլեմային ուսուցման տարրեր:

Դպրոցում սովորական ձևերին և պահանջներին աստիճանաբար գալիս են փոխարինելու ժամանակակից կրթական պահանջները՝ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները, միաժամանակ պահելով սովորական ձևերն ու պահանջները կատարելագործում ենք ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսներին և ուսումնադաստիարակչական միջոցառումներին, որը միտված է քննադատական և տրամաբանական մտածողության զարգացմանը, ժամանակակից հաղորդակցման հմտություններին:ՏՀՏ-ի կիրառմամբ դասապրոցեսներն անցնում են հետաքրքիր, սովորողները լավ յուրացնում են նյութը, հետաքրքրություն է առաջանում դասանյութի նկատմամբ:

ՏՀՏ-ի նորագույն տեխնոլոգիաները թույլ կտան խթանել՝

- Ուսուցման նոր մեթոդների և տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը՝ համադրելով ուսուցման ավանդական մեթոդների հետ
- Սովորողների կողմից ուսուցանվող նյութի յուրացման դյուրինացումը և նրանց առաջադիմության ու մոտիվացիայի բարձրացումը Արդի դարաշրջանում խիստ անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների զարգացումը
- Ուսումնական գործընթացում հայալեզու էլեկտրոնային տարատեսակ ռեսուրսների ստեղծումը և օգտագործումը
- Հավասար պայմաններ բոլոր սովորողների համար՝ այդ թվում ԿԱՊԿՈՒ ունեցողների
- Մանկավարժների՝ ՏՀՏ պատրաստվածության, հմտությունների և գիտելիքների զարգացումը և ակտիվ օգտագործումը դասապրոցեսներում, որը թույլ է տալիս ուսուցչին և սովորողին միևնույն միջավայրում

Հաստատությունում դպրոցի տեղեկատվական բազայի մուտքագրումը և թվայնացումը ներգործել են դպրոցի գործունեության նորացմանը , դպրոցն ակտիվ օգտվում և համագործակցում է հետևյալ կրթական կայքերի հետ

1.ԿՏԱԿ /Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն ՊՈԱԿ/- Կազմակերպության շնորհիվ ապահովվում է հանրակրթական դպրոցում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրումն ու դրա շարունակականությունը, ինտերնետային կապի ներդրումը, կրթական տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների բնագավառի բոլոր ծրագրերի կորդինացումը , ուսուցիչների վերապատրաստումը, հանրակրթական դպրոցների ինտերնետային համալիր էջի ստեղծումը և դրա շահագործումը , համկարգչային ուսումնական նյութերի և ծրագրային փաթեթների մշակումը, հրապարակումը և տրամադրումը:

2.ԿԶՆԱԿ/Կրթության զարգացման և նորարարությունների ազգային հիմնադրամ/- Հիմնադրամի նպատակն է կրթության ոլորտի արդիականացումը:

3.ՀԿՄ/Հայկական կրթական միջավայր/-Տեղեկատվություն է տեղադրվում Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի գործունեության և կրթության ոլորտում իրականացվող ծրագրերի մասին:Ներկայացնում են կրթական և մշակութային միջոցառումների մասին պատմող նյութեր, որոնք կազմակերպվել են տարբեր ուսումնական հաստատություններում, տեղադրվում են հայտարարություններ և մամլո հաղորդագրությունները կազմակերպվող տարբեր մրցույթների, աշխատանքային հանդիպումների, դասընթացների, թափուր աշխատատեղերի մասին:

4.Պաշարների շտեմարան» կայքում մանկավարժների և աշակերտների ,ինչպես նաև կրթության ոլորտի մասնագետների համար ըստ բաժինների տեղադրվում են փորձարկվող դասագրքեր, ուսուցչի և այլ ուսումնական ձեռնարկների էլեկտրոնային տարբերակները:Միասնական և ավարտական քննությունների փաստաթղթեր,

առաջադրանքներ, դիմորդի տեղեկատուներ, առարկայական շտեմարաններ և այլ մեթոդական նյութեր:
5.Microsoft Teams-հայալեզու առցանց հարթակ է որով համակարգվում է կրթության ոլորտում առկա մարդկային ռեսուրսների վերապատրաստման դասընթացներ, հեռավար դասեր և հանդիպումներ:
6.«Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ»-այս կայքից օգտվում ենք ԲՏՃՄ ոլորտի չորս առարկաների / ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, երկրաչափություն/ դպրոցական ծրագրին համապատասխանող նյութերից, որոնք ուսուցիչները և աշակերտները օգտագործում են դասապրոցեսներին:
7.Գնահատման և թեստավորման կենտրոն-տեղադրվում են ավարտական և միասնական քննությունների տվյալները,նյութերը, կարգերը ուսուցիչների և սովորողների համար:
8.Olymp.am- ակտիվ տեղեկատվություն է տալիս դպրոցի շահառուներին մարզային , հանրապետական և միջազգայինօլիմպիադաների արդյունքների և ժամանակացույցերի, կայացման վայրերի մասին:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| 1.Հեռավար, համակցված, տնային-հեռավար ուսուցման կազմակերպում<br>2.Մենթոր դպրոցի հետ ուսումնական ծրագրի կատարման ապահովում<br>3.Էլեկտրոնային մատյանների լրացում և վերահսկողություն<br>4.Գործածվող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակի կիրառություն<br>5.Դասապրոցսների, արտադասարանական խմբակների, նախագծային աշխատանքների կազմակերպում<br>6.Ներառական կրթության իրականացնում<br>7.Մեդիագրագիտություն<br>8.Վարչատնտեսական փաստաթղթերի կիրառություն<br>9.Դպրոցի ընդհանուր գործունեության հանրային ընկալման ներկայացնում | 1.Համակարգիչների պակաս<br><br>2.ՈՒսուցիչների և սովորողների համակարգչային կարողությունների միջին մակարդակ<br><br>3.Էլեկտրոնային գրատախտակի և պրոյեկտորների պակաս |

| Նպատակ | Խնդիր | Գործողություն | Ժամկետներ | Պատասխանատուներ | Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ | Ռիսկեր | Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող |
|---|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | միջոցներ, նյութատեխնիկական պարագաներ, մարդ-կային ռեսուրսներ | | գործողություններ |
| 1.ՏՀՏ-ների կիրառման միջոցով բարձրացնելու ուսուցման արդյունավետությունը, ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի միջոցով ապահովել սովորողների անհատական առաջընթացը:<br>2.Ունենալ մեդիագրագետ, մեդիահակերնեrից պաշտպանված աշխատողներ ևսովորողներ: | 1.Սովորողներին սովորեցնել համացանցից անվտանգ օգտվելու կանոնները<br>2.Նախագծային, ստեղծագործական, հետազոտական, ինքնուրույն աշխատանքները կարողանան ինքնուրույն պլանավորել | 1.Գործածվող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակի կիրառություն<br>2.Մեդիագրագիտության ուսուցում<br>3.Էլեկտրոնային մատյանների լրացում և վերահսկողություն<br>4.Դասապրոցեսի, արտադասարանական խմբակների ,նախագծային աշխատանքների կազմակերպում<br>5.Հեռավար, համակցված դասերի կազմակերպման համար գործնական սեմինարների կազմակերպում: | 2023-2028 մշտապես<br>2023-2025<br>2023-2028յուրաքանրյուր շաբաթվա վերջ<br>2023-2028 մշտապես<br>2023-2024 | տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, մ/մ նախագահներ, ուսուցիչներ ԿԶՆԱԿ<br>տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, մ/մ նախագահներ, ուսուցիչներ ԿԶՆԱԿ | ԿԳՄՍ, ԿԶՆԱԿ, լիազոր մարմին, ՀԿ-ներ, հիմհադրամներ<br>լիազոր մարմին պետական բյուջե, բարերարներ, դրամաշնորհային ծրագրեր | 1.Նորամուծությունների մերժում,<br>2. Մոտիվացիայի ցածր մակարդակ,<br>3.Ֆինանսների անբավարարություն,<br>4.Համագործակցության մերժում,<br>5.Ֆորս-մաժորային իրավիճակներ | 1.Հիմնավորել նորամուծությունների դեպքում սպասվող դրական արդյունքները ,<br>2. Խրախուսանք,<br>3.Բյուջեի, ֆինանսական միջոցների ռացիոնալ օգտագործում,փնտրել ֆինանսական աղբյուրներ,<br>4. Ներկայացնել համագործակցության փոխշահավետ դրական կողմերը<br>5.Գործողությունները պլանավորելիս հաշվի առնել հնարավոր խոչընդոտող հանգամանքները: |

## Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը

Կրթության որակը կարելի է բարձրացնել՝ բացահայտելով իրավիճակը գնահատելու միջոցով այն փոխելու հնարավորությունները: Անհրաժեշտ է դիտարկել հետևյալ գործոնները.

1. Ուսումնական գործընթացի փաստացի վիճակը:
2. Կրթական գործընթացի կատարողականը:
3. Կրթական գործընթացի արդյունավետությունը:
4. Կրթական գործընթացի որակը կրթական աստիճաններում:

Դպրոցում յուրաքանչյուր սովորողի, կրթական կարիքների, արտակարգ ընդունակություններ, ցածր առաջադիմություն ունեցողների, ինչպես նաև հանրակրթությունից դուրս մնացած երեխանեի համար կազմակերպել, իրականացնել լրացուցիչ հանրակրթական ծրագրեր,արտադասարանական խմբակներ, որոնք կնպաստեն կրթության որակի բարձրացմանը: Կրթության որակը կախված է ուսումնական միջավայրից: Ուսումնական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից

դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Այն պայմանավորված է նշված բոլոր ուղղությունների առկայությամբ և փոխկապակցվածությամբ: Դպրոցը կարող է ուժեղ լինել մի ուղղությամբ, բայց այդ ուժը կթուլանա մեկ այլ ուղղության թույլ լինելու պատճառով:

| Ուստարի | 2018-2019 | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|---|---|---|
| Ընդհանուր առաջադիմություն | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| Որակական առաջադիմություն | 60% | 62% | 60% | 59% | 57% |
| Վերջին 3 տարում գերազանցիկների թիվ | ----- | ------ | 36 սովորող | 31 սովորող | 29 սովորող |

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| 1. Ցածր առաջադիմություն, արտակարգ ընդունակություններ ունեցողներին անհատական մոտեցում | 1.Լաբորատորիաները համալրված չեն անհրաժեշտ նյութերով: |
| 2.Դպրոցն համագործակցում է ԿՏԱԿ-ի,ԿԶՆԱԿ-ի,ԳԹԿ-ի ԱԻՆ-ի, իրավապահ մարմինների,մարզային գրադարանի և այլ կառույցների հետ | 2.Օլիմպիական խմբակներ, բանավեճի ակումբ չկա: |
| 3. Կազմված են թեմատիկ պլաններ՝պետական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան | 3.Համակարգչային կաբինետն անհրաժեշտ է համալրել նոր համակարգիչներով և պրոյեկտորներով: |
| 4. Մեթոդմիավորումները վերահսկում են այդ պլանների կատարումը, որակը, տնային հանձնարարությունների ծավալը,թեմատիկ գրավորների տրման ժամկետներն ու բովանդակությունը | 4.Դպրոցի մեջ թեքահարթակների բացակայություն: |

| | |
|---|---|
| 5. Պարբերաբար կատարվում են մշտադիտարկումներ, առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրություններ | 5.Սմարթ ընթերցասրահի բացակայություն: |
| 6. Տրվում են հայտորոշիչ գրավոր աշխատանքներ՝ստուգելու մնացորդային գիտելիքը | 6.Աշակերտները չեն մասնակցում փոխանակման տարբեր ծրագրերի՝օրինակ <<ԻՄ համայնքը>>: |
| 7.Դպրոցում ձևավորված են հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին | |
| 8.Աշակերտների առաջադիմության մասին զեկուցվում է դասղեկներին մեթոդմիավորումների նիստերում, քննարկվում ենառաջադիմությունը, որակը, հոգեբանական և ուսուցման բովանդակության լուրջ փոփոխություններին աշակերտների հարմարեցման նորագույն տեխնոլոգիաներ, էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, արդյունավետ մեթոդներ: Անհրաժեշտությունն ու ձևերը | |
| 9.Դպրոցական օլիմպիադաների դպրոցական և տարածքային փուլերին մասնակցել են 50 սովորող 1 սովորող մասնակցել է հանրապետական փուլին | |
| 10. Ըստ անհրաժեշտության՝անցկացվում են դասարանական խորհրդակցություններ, քննարկվում ծագած խնդիրները, գտնումլուծման ուղիներ: | |

## 2022-2023 ուսումնական տարում դպրոցում իրականացվել են՝

Տարրական դպրոց՝ 8 մեթոդական զեկույց

7բաց դաս

6 միջոցառում

Միջին դպրոց՝ 5 մեթոդական զեկույց

7 բաց դաս

3 միջոցառում

| Նպատակ | Խնդիր | Գործողություն | Ժամկետներ | Պատասխանատուներ | Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, նյութատեխնիկական պարագաներ, մարդ-կային ռեսուրսներ | Ռիսկեր | Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1.Ժամանակակից կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան բարոյահոգեբանական,ֆիզիկական միջավայրի ստեղծում:<br>2.Արտադասարանական նպատակային միջոցառումների կազմակերպում՝ ճանաչողական էքսկուրսիաներ, ձևավորել թատրոն այցելելու մշակույթ<br>3.Ներառական կրթությունը դարձնել գերակա՝ ընդունելով, որ յուրաքանչյուր երեխա տարբեր է սովորելու և ընկալելու տեսանկյունից | 1.Ներառական կրթության բարելավում<br>2.Ռեսուրս սենյակի ստեղծում<br>3.Սովորողների ինտեգրում ուսումնական միջաայր<br>4.Ծնողների մասնակցություն ուսումնական միջավայրի կայացման և կրթության որակի բարձրացման գործում<br>5.ՀՊՉ-ով նախատեսված վերջնարդյունքների ապահովում | 1. Հաճախակի կազմակերպել սեմինարների,դասախոսություններ<br>1.1 Յուրաքանչյուր դասարանի աշակերտների՝ բոլոր առարկաների արդյունքների վերաբերյալ կազմել տեղեկագրեր<br>2.Ստեղծել ռեսուրս սենյակ,որը կբարձրացնի բազմամասնագիտական թիմի աշխատանքի արդյունավետությունը<br>3.Ձևավորել մշտական օլիմպիական խմբեր,ամեն տարի համալրելով նոր, շնորհալի սովորողներով: Ստեղծել բանավեճի ակումբ:<br>4.Աշակերտների փոխանակման տարբեր ծրագրերի մասնակցություն՝ օրինակ՝<<ԻՄ համայնքը>>: | 2023-2028<br>1.1Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին<br>2023-2024<br>2023-2025<br>2023-2028 յուրաքանչյուր ուստարվա սկիզբ | 1.Տնօրեն,Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, մ/մ նախագահներ, դասղեկներ<br>1.1 առարկայական ուսուցիչներ ,դասղեկներ<br>2.տնօրեն, տնօրենի տեղակալ, վարչատնտեսական համակար գող, բազմամասնագիտական թիմ<br>3.Տնօրեն, տնօրենի տեղակալ, համակարգող, մ/մ-ներ<br>4,Տնօրեն, տնօրենի տեղակալ, համակարգող, լիազոր մարմին<br>Ծնող<br>Համայնք | ԿԳՄՍ, ԿԶՆԱԿ, լիազոր մարմին, ՀՄԿ, ՏՄԱԿ, ՀԿ-ներ, Տարակարգի, կամավոր ատեստավորման, պարտադիր ատեստավորման նախատեսված գումարներ:<br>Փորձառու ուսուցիչների փորձի փոխանակում, միասնական, համագործակցված աշխատանք բոլոր ոլորտներում: | 1.Դպրոցի աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակի խոչընդոտներ<br>2.Դպրոցի նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածություն<br>3.Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեության մասնակցության պասիվություն<br>4.Նյութատեխնիկական, ուսումնամեթոդական բազայի ուսուցման բովանդակությանը ոչ համապատասխան լինելը<br>5.Ներառական կրթության ապահովման համար բազմամասնագիտական թիմի բացակայություն կամ ոչ բավարար պատրաստվածություն | 1.Մանկավարժներին ընդգրկել վերապատրաստման դասընթացներին մասնագիտական և մանկավարժական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով<br>2.Ֆինանսական միջոցների ճիշտ պլանավորում, լրացուցիչ միջոցների հայթայթում<br>3.Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը<br>4.Նյութատեխնիկական բազայի ուսուցման բովանդակությանը համապատասխանեցնելու գործողությունները ԴԶԾ-ում նշված տարբեր միջոցառումների իրականացման միջոցով կազմակերպում<br>6. ՏՄԱԿ-ի հետ շարունակական համագործակցություն, վերապատրաստումներ, փորձի փոխանակում այլ դպրոցներ հետ |

**Բազմակարծիք ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն**

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| Սովորողների ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության ձևավորում,ամրապնդում են շարունակաբար:<br>Սովորողների նպաստավոր գործողություններ՝ ուղղված իրենց կրթական սոցիալականացման, իրավունքների պաշտպանության, առողջության պահպանման արդիականացմանը<br>Մասնակցային և բազմակարծության գործընթաց կառավարման,ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման, հանրային քնարկման, որոշումների կայացման, ռեսուրսների բաշխման, ուսման և դաստիարակման որակի համար:<br>Ազգային փոքրամասնության,կրոնական այլ ուսմունք ունեցող, սոցանապահով ԿԱՊԿՈՒ սովորողները ապահով են և անվտանգ: Նրանք տեղեկացված են իրենց իրավունքներից և պարտականություններից:Հանդուրժող են իրենց ընկերների, դասընկերների, ուսուցիչների և շրջապատի նկատմամբ<br>Աշակերտների, մանկավարժների,ծնողների ձայնը և կարծիքները որոշումների կայացման գործում լսելի են և ներառվում է դպրոցի գործունեության մեջ:<br>Դպրոցում հաջողություն ողջունելը և քաջալերելը մշտապես առկա է:<br>Դպրոցում կրթությունը իրականացվում է ժողովրդավարության պայմաններում, ակտիվ կերպով իրականացվում է դպրոցական մասնակցությունը նոր և նորանոր մոտեցումներում:<br>Բռնության և հալածանքի դեպքերն բացառված են դպրոցում, մշտապես տարվում են բացատրական աշխատանքներ /հոգեբանի,սոց.մանկավարժի կողմից/, նաև խտրական վերաբերմունքը բացառելու ուղղությամբ:<br>Մշտապես աշխատանքներ և նախաձեռնություններ են տարվում ԿԱՊԿՈՒ սովորողներին ուշադրության կենտրոնում պահելու և ուսումնական գործունեությանը ինտեգրելու համար:<br>Դպրոցի մանկավարժները՝ այդ թվում սոց.մանկավարժը, հոգեբանը կարևոր դեր են կատարում ակտիվ և ընդհանուր մոտեցումների միջոցով ժողովրդավարական արժեքների խթանման գործընթացում: | Մանկավարժների, ծնողների ոչ լիարժեք դիրքորոշում, նրանց կողմից քաղաքացիական հասարակության դերակատարության հաստատունն ստանձնում:<br>Որոշ մանկավարժների և ծնողների չհանդուրժողականություն՝ բազմակարծության և մասնակցային գործընթացները որպես ժողովրդավարության գործիք:<br>Սովորողների կողմից նոր գաղափարների իդեալների արտահայտման մտավախություն:<br>Ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին որոշ աշակերտներիցածր մասնակցություն: |

| Նպատակ | Խնդիր | Գործողություն | Ժամկետներ | Պատասխանատուներ | Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, նյութատեխնիկական պարագաներ, մարդ-կային ռեսուրսներ | Ռիսկեր | Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1.Դպրոցում ձևավորվել և շարունակական զարգացնել հասարակական տրանսֆորմացիան՝ մասնակցային մեխանիզմների և ներառական ու բազմակարծիք արժեքային միջավայրը, մշակույթը, որոնք հադիսանում են կարևորագույն նախադրյալներ դպրոցում ուսումնադաստիարակչական և վարչատնտեսական ամբողջ գործընթացը կազմակերպելու և իրականացնելու ժողովրդավարացման սկզբունքով:<br><br>2.Յուրաքանչյուրը իրեն զգալու է արժևորված, գնահատված,որն էլ կիանգեցնի ուսման որակի, կատարվող աշխատանքի և ընդհանուր առմամբ բոլորի կյանքի բարվոքության<br><br>3. Բոլորի համար գործում են հավասար իրավունքներ, պարտականութ-յունների կատարման պարտավորվածություն<br><br>4.Հաջողութոււնները և թերությունները | 1.Որոշ մանկավարժների և ծնողների չհանդուրժողականություն բազմակարծության և մասնակցային գործընթացները որպես ժողովրդավարության գործիք<br><br>2.Մանկավարժների, ծնողների ոչ լիարժեք դիրքորոշում, նրանց կողմից քաղաքացիական հասարակության դերակատարության հաստատուն ստանձնում | 1.Սովորողների ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության ձևավորում,ամրապնդում<br><br>2.Սովորողների նպաստավոր գործողություններ իրենց կրթական սոցիալականացման, իրավունքների պաշտպանության, առողջության պահպանման արդիականացմանը<br><br>3.Մասնակցային և բազմակարծության գործընթաց կառավարման,ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման, հանրային քնարկման, որոշումների կայացման, ռեսուրսների բաշխման, ուսման և դաստիարակման որակի համար:<br><br>4.Մշտադիտարկման միջոցով զարգացնելել սովորողների թիմում աշխատելու, որոշումներ կայացնելու, ընդհանուր նպատակին հասնելու կարողունակություններ:<br><br>5.Բազմակարծության, հանդուրժողականության և բոլորին հավասար ընդունելու | 2023-2028<br>շարունակաբար<br><br>2023-2024<br>և<br>մշտապես<br><br>2023-2028<br>յուրաքանչյուր տարի<br><br>Յուրաքանչյուր տարի<br><br>2023-2028 | տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, ուսուցչի օգնական, հոգեբան, ԴԱԿ, ՄԽ, ԾԽ, ԱԽ<br><br>տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, ուսուցչի օգնական, հոգեբան, ԴԱԿ, ՄԽ, ԾԽ, ԱԽ<br><br>տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, ուսուցչի օգնական, հոգեբան, ԴԱԿ, ՄԽ, ԾԽ, ԱԽ<br><br>տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, ուսուցչի օգնական, հոգեբան, Մ/Մ,ԴԱԿ, ՄԽ, ԱԽ | ԿԳՄՍ, ԿԶՆԱԿ, լիազոր մարմին, ,հիմհադրամներ<br><br>պետբյուջե, բարերարներ, դրամաշնորհային ծրագրեր,<br><br>Համագործակ-ցային աշխատանք, արդյունավետության երաշխիք: | 1.Մանկավարժների բացասական վերաբերմունքը դպրոցի ընդհանուր գործունեությանը<br><br>2.Ներառական կրթության ապահովման համար բազմամասնագիտական թիմի ոչ բավարար պատրաստվածություն<br><br>3.Ծնողների բացասական և կանխակալ վերաբերմունք դեպի դպրոցը | 1.Մանկավարժների բազմակարծության, նրանց՝ դպրոցի ընդհանուր գործունեության որոշումների կայացման, կազմակերպման և իրականացման գործում մասնակցային դրսևորումների և դիրքորոշումների ապահովում և խրախուսում<br><br>2. ՏՄԱԿ-ի հետ շարունակական համագործակցություն, բազմամասնագիտական թիմի ձևավորում, վերապատրաստումներ, փորձի փոխանակում այլ դպրոցներ հետ<br><br>3.Տարաբնույթ միջոցառումների կազմակերպում դպրոցի կողմից,ծնողների ակտիվ ներգրավվածությամբ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| կլինեն համընդհանուր<br>5.Ազգային փոքրամասնության,կրոնական այլ ուսմունք ունեցող, սոցանապահով սովորողների նկատմամբ չունենալ կանխակալ վերաբերմունք | | թեմաներով կազմակերպել սեմինար-քննարկումներ մանկավարժական բոլոր աշխատողների հետ, ԾԽ-ի և ԱԽ-ի հետ, ինչպես նաև տաբեր դասարաններում դասղեկի ժամին փոքրիկ բեմադրություններ իրականացնել նշված թեմայով: | Շարունակաբար, յուրաքանչյուր ուստարի | | Համագործակ-ցային աշխատանք, արդյունավետության երաշխիք: | | |

## Աշխատակազմի արժևորման խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| Դպրոցում ուսուցիչները համախմբված են ու անկաշկանդ: Դպրոցի բարոյահոգեբանական մթնոլորտը նպաստում է ստեղծագործական աշխատանքին ու նոր գաղափարների առաջարկմանը:Համագործակցության արդյունքում էապես բարձրանում է յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքի որակը, որը արժանի գնահատակն է ստանում թե շնորհակալական խոսքի, թե շնորհակալագրի և պատվոգրի, թե հուշավների տեսքով:Դպրոցում կազմակերպվում են տարբեր ուղղվածության միջոցառումներ, բաց դասեր, նպատակային էքսկուրսիաներ և յուրաքանչյուր կիսամյակի վերջում ամփոփվում է կատարված աշխատանքի որակն ու արժանանում է խրախուսանքի, որն էապես ազդում է ուսուցիչների մոտիվացիայի և շարունակական ինքնակրթման վրա: | Դեռևս կան ուսուցիչներ ովքեր նախընտրում են անել աշխատանքի այն չափը, որը նախատեսված է իր թեմատիկ պլանով և բաց չեն նորի ու փորձարարական թեմաների համար: Տարակարգ և կամավոր ատեստավորում ստանալու ոչ բավարար հետաքրքրվածություն և մասնակցություն:<br>Երիտասարդ ուսուցիչների մոտ ինքնակատարելագործման և ինքնավստահությանմոտիվացիայի թույլ մակարդակ: |

| Նպատակ | Խնդիր | Գործողություն | Ժամկետներ | Պատասխանատուներ | Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, նյութատեխնիկական պարագաներ, մարդ-կային ռեսուրսներ | Ռիսկեր | Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1.Խթանել աշխատակիցների աշխատանքը<br>2.Բարձրացնել կատարվող աշխատանքների արդյունավետությունը<br>3.Օժանդակել ինքնակրթությանն ուղղված նախաձեռնություններին<br>4.Նպաստել նոր գաղափարների ներդրմանը | 1.Անտարբերություն<br>2.Ծանրաբեռնվածություն<br>3.Մոտիվացիայի պակաս<br>4.Նորի հանդեպ հետաքրքրության պակաս | 1.Ապահովել և վերահսկել դպրոցում աշխատակիցների բարեվարքության վարքականոնները<br>2.Պարբերաբար ներկայացնել և քննարկել կատարված աշխատանքները, տալ արժանի գնահատական<br>3.Վերլուծել արդյունքները ,գնահատել լավագույններին և պարգևատրել (դրամական խրախուսանք, շնորհակալագիր, պատվոգիր, հուշանվեր և այլն)<br>4.Ձևավորել ինքնակրթության միջավայր(ընթերցասրահ,նախագծային աշխատանք, վերապատրաստումներ) | 2023-2028 մշտապես<br>Յուրաքանչյուր կիսամյակ, առնվազն 2 անգամ<br>Յուրաքանչյուր ուստարվա ավարտին<br>2023-2028մշտապես | Տնօրեն, Կառավարման խորհուրդ, հաշվապահ տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, մ/մ նախագահներ<br>Տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, ՄԽ, ԾԽ, ԱԽ | ԿԳՄՍ, լիազոր մարմին, պետբյուջե, արտաբյուջե բարերարներ,դրամաշնորհային ծրագրեր | 1.Ինքնակրթության և Ինքնազարգացման մոտիվացիայի պակաս<br>2.Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ, որը հնարավորություն չի տա կատարել դրամական խրախուսում<br>3.Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեության վերաբերյալ պասիվություն | 1.Ինքնակրթության և ինքնազարգացման համապատասխան միջավայրի և գործիքների տրամադրում և մոտիվացիայի տարբեր ձևերի կիրառում (պարգևատրումներ,խրախուսումներ,պատվոգրեր և այլն):<br>2.Խրախուսման այլընտրանք դտնել, որպեսզի չկորի ուսուցչի մոտիվացիան<br>3. Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը |

## Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծություն

ՀՀ Հանրակրթության մասին օրենքով սահմանված կառավարման նոր համակարգի համաձայն՝ դպրոցի տնօրենը ուսումնական գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ կարիքները տրամադրում է համակարգողին՝

պահանջվող ծախսերը գնահատելու, նախահաշիվ կազմելու և լիազոր մարմին ներկայացնելու համար: Դպրոցի ֆինանսավորումը իրականացվում է պետական բյուջեից՝ ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի(տարրական և հիմնական) և պայմանավորված է սովորողների թվով: Գերակշիռ ծախսերը վերաբերում են աշխատավարձեր և դրան հավասարեցված վճարումներ,էներգետիկ,կոմունալ, սննդի, գրասենյակային, կապի և ինտերնետի, համակարգչային ծառայությունների ապահովման, ջրամատակարարման և ջրահեռացման,աաշխատանքների ուղղություններին: Լաբորատոր նյութերի և սարքավորումների,գույքի ձեռքբերման նպատակով կատարվող ծախսեր գրեթե չեն լինում քանի որ աշակերտների թվով պայմանավորված ֆինանսավորման տատանումները ռիսկային գործոն են նախահաշվի այլ ծախսեր հոդվածում եղած գումարները հատկացնելու ուսումնական նպատակներով կատարվող ծախսերին: ՀՀ Կառավարության որոշումով և ԿԳՄՍ նախարարի հրամանով դպրոցները 2023 թվականի սեպտեմբերից անցնելու են դասարան-թիվ ֆինանսավորման, ինչը նախատեսում է դպրոցի ֆինանսական վիճակի բարելավում:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Դպրոցի բյուջեի արդյունավետ և նպատակային օգտագործում | • Յուրաքանչյուր տարի սովորողների թվի նվազում նախորդ տարվա համեմատ |
| • Ծնողական և մանկավարժական խորհուրդների համատեղ նիստի արդյունքում սոցիալապես անապահով համակարգում ընգրկված ընտանիքի երեխաներին անվճար դասագրքերի վարձավճարների փոխհատուցում պետական բյուջեից | • Ըստ սովորողների նվազման, նաև պետական բյուջեից ավելի քիչ ֆինանսավորում:Սովորողների շարունակական նվազման պատճառով կարող է դասարանների թիվը պակասել |
| • Աշխատավարձերի ՝օրենքով սահմանված կարգով վճարում և նախահաշվով նախատեսված հոդվածներով վճարումներ | • Արտաբյուջեի բացակայություն |
| • Պետության կողմից ֆինանսավորման ճիշտ ժամանակին տրամադրում | |
| • Ուսուցիչների պարտադիր ատեստավորման համար կատարված վճարումներ | |
| • Ախտահանող միջոցների ձեռքբերում | |

## Ստորև ներկայացվում է բյուջեի տարեկան ծախսերի մասին տեղեկություն

(Տվյալները տրամադրվել են դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից)

| | 2019 թ. | 2020 թ. | 2021 թ. | 2022 թ. | 2023 թ.(8 ամիս) |
|---|---|---|---|---|---|
| Տարեկան ֆինանսավորում | 50996,7 | 47166,1 | 48925,0 | 48211,6 | 36051,7 |
| Տարեկան աշխատավարձի ֆոնդ | 43661,3 | 42942,3 | 41937,4 | 42712,6 | 29151,0 |
| Տարեկան կոմունալ և այլ ծախսեր | 6955,6 | 4122,2 | 4104,7 | 5063,5 | 4446,0 |
| Անապահով սովորողների գրքերի վարձավճարների փոխհատուցվող գումար | 64,0 | 59,0 | 56,0 | 60,0 | ------- |
| Ուսուցչի միջին ամսական աշխատավարձ | 114,158 | 114,158 | 114,158 | 114,158 | 114,158 |
| Սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձը | 89103 | 89103 | 89103 | 89103 | 95600 |
| Սովորող ուսուցիչ հարաբերակցություն | 1/10 | 1/10 | 1/10 | 1/10 | 1/10 |
| Դասարանների միջին խտություն | 20 | 20 | 20 | 19 | 19 |

Աղյուսակում ներկայացված են 2022թ. հոկտեմբերից մինչև դեկտեմբեր 31-ըկատարված ծախսերը:

Տվյալները վերցված են <<Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքում տեղադրված եռամսյակային հաշվետվություններից:

| Մատուցված ծառայությունների, կատարված աշխատանքների և մատակարարված ապրանքների անվանումը | Չափման միավորը | Փաստացի կատարված ծախսերը հազ. դրամ/01.10.2022-30.12.2022 | Վճարված գումարը հազ.դրամ/ 01.10.2022-30.12.2022 | Բյուջեով նախատեսված գումարը 4-րդ եռամսյակ/ հազ. դրամ/ |
|---|---|---|---|---|
| Աշխատավարձ | դրամ | 11800,0 | 13017,4 | 11800,0 |
| Էներգետիկ ծառայություններ | դրամ | 393,3 | 393,3 | 393,3 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Կապի ծառայություն | դրամ | 14,7 | 12,1 | 14,7 |
| Կոմունալ | դրամ | 100,0 | 72,2 | 100,0 |
| Սնունդ | դրամ | 305,6 | 305,6 | 305,6 |
| Համակարգչային ծառայություններ | դրամ | 95,0 | 95,0 | 95,0 |
| Հատուկ նպատ. նյութեր | դրամ | 134,0 | 134,0 | 134,0 |
| Այլ ծախսեր | դրամ | 120,0 | 120,0 | 120,0 |
| Ընդամենը | դրամ | 12962,6 | 14149,6 | 12962,6 |

## Աղյուսակում ներկայացված են 2023թ. հունվարից մարտի 31-ը կատարված ծախսերը։

| Մատուցված ծառայությունների, կատարված աշխատանքների և մատակարարված ապրանքների անվանումը | Չափման միավորը | Փաստացի կատարված ծախսերը հազ. դրամ/01.01.2023-31.03.2023 | Վճարված գումարը հազ.դրամ/ 01.01.2023-31.03.2023 | Բյուջեով նախատեսված գումարը 1-ին եռամսյակ/ հազ. դրամ/ |
|---|---|---|---|---|
| Աշխատավարձ | դրամ | 11010,0 | 7527,2 | 7527,2 |
| Էներգետիկ ծառայություններ | դրամ | 315,5 | 422,3 | 322,3 |
| Գազ | դրամ | 10440,2 | 1020,5 | 1020,5 |
| Կապի ծառայություն | դրամ | 14,4 | 9,2 | 9,2 |
| Սննդի ծախս | դրամ | 541,0 | 531,9 | 531,9 |
| Կոմունալ | դրամ | 53,5 | 42,2 | 42,2 |
| Ընդամենը | դրամ | 22374,6 | 9553,3 | 9453,3 |

| Նպատակ | Խնդիր | Գործողություն | Ժամկետներ | Պատասխանատուներ | Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, նյութատեխնիկական պարագաներ, մարդ-կային ռեսուրսներ | Ռիսկեր | Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Բացի պետական բյուջից ստացվող կայուն ֆինանսավորումից ունենալ լրացուցիչ ֆինանսատնտեսական գործունեություն : | 1.Արտաբյուջի ձևավորում<br><br>2.Դրամաշնորհային ծրագրերի մասնակցություն<br><br>3.Շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդների ձևավորում<br><br>4.Բյուջեի նպատակային, ճիշտ պլանավորում | 1.Իրականցնել լրացուցիչ կրթական ծրագրեր, ձեռնարկատիրական գործունեություն,<br>2.Օրենսդրությամբ սահմանված կարգով դպրոցի չօգտագործվող շինությունները տալ վարձակալության,<br>3.Մրցութային հիմունքներով լրացուցիչ ֆինանսավորում պետական բյուջեից,<br>4.Օրենքով չարգելված ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների նվիրատվություններ<br><br>5.Գտնել բարերարներ, իրականացնել նպատակային ծրագրեր,պետության վրայից վերցնելով որոշակի հոգսեր,<br>6.Հնարավորության դեպքում անել խնայողություններ | 2023-2028թթ յուրաքանչյուր տարի<br><br>2023-2028թթ յուրաքանչյուր տարի<br><br>2023-2028թթ<br><br>2023-2028թթ<br><br>2023-2028թթ | տնօրեն, Կառավարման խորհուրդ, համակարգող ծնողական խորհուրդ | ԿԳՄՍ, լիազոր մարմին,<br><br>պետբյուջե, արտաբյուջե բարերարներ, դրամաշնորհային ծրագրեր,<br><br>Հոգաբարձուների խորհուրդ<br><br>Շրջանավարտների խորհուրդ | 1.Դասարան թվի նախատեսվածից քիչ քանակ<br>2.Ոչ բավարար պետական բյուջե<br>3.Դպրոցի՝ լրացուցիչ աղբյուրներից ֆինասավորման բացակայություն<br>4.Շենքի մաշվածության չափի ավելացում<br>5ՌԻսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտ կարիքների ոչ ճիշտ գնահատում և ներկայացնում<br>6.Նպատակային ներդրումների պակաս կամ բացակայություն | 1ՀՀ կառավարության սահմանած մրցույթային կարգով և ուղիղ դրամաշնորհի ձևով պետական բյուջեից լրացուցիչ ֆինասավորում<br>2.ՀՀ և Օտարերկրյա քաղաքացիների ու կազմակերպությունների նվիրատվություններ<br>3.Համագործակցություն համայնքի նախադպրոցական հաստատությունների հետ՝ երեխաների ընդունելության խթանման միջոց<br>4.Սովորողների ծնողների և համայնքի ցանկության դեպքում վճարովի հիմունքներով լրացուցիչ կրթական ծրագրեր և մասնագիտական այլ ծառայությունների կազմակերպում՝ Կարգի համաձայն. Դպրոցի տարածքներԻ՝ վարձակալության հիմունքներով հանձնում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |

## 3. Զարգացման ծրագրի կատարման արդյունքներիգնահատման չափանիշներ

### 3.1 Ուսումնական հաստատության շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի արդիականացում

| Գործողությունները | Ակնկալվող արդյունք | Գնահատման չափանիշ |
|---|---|---|
| 1.Ուսումնական հաստատության շենքային պայմանների արդիականացում և նյութատեխնիկական բազայի ձեռք բերում, բարելավում | Ունենալ ապահով, հարմարավետ, խելամիտ լուծումներով դպրոց, որը կնպաստի յուրաքանչյուր սովորողի կրթության իրավունքի լիարժեք իրացմանը | Աշխատանքները կատարվել են՝<br><br>1. մինչև 10%-ը՝ անբավարար,<br>2. մինչև 30%-ը՝ բավարար,<br>3. մինչև 60 %-ը՝ լավ,<br>4.ամբողջ ծավալով՝ գերազանց |

### 3.2 Կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների ազդեցության գնահատման չափանիշներ

| Գործողությունները | Ակնկալվող արդյունք | Գնահատման չափանիշ |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| 1.Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցություն | Սովորողները կրթական գործընթացի լիարժեք մասնակիցներ են | Ներգրավվել են ԿԱՊԿՈՒ սովորողների՝<br>1. մինչև 10%-ը՝ անբավարար,<br>2. մինչև 30%-ը՝ բավարար,<br>3. մինչև 60 %-ը՝ լավ,<br>4. 60 %-ից ավելի՝ գերազանց |
| 2.Դպրոցում սովորող՝ արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողների համար անհատական ուսուցման կազմակերպում | Արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողների կրթական կարիքները բավարարված են | 1.Գործողությունն իրականացնելու ուղղությամբ որևէ գործառույթ չի իրականացվել՝ անբավարար,<br>2.Իրականացվել է արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողների դիտարկման նախապատրաստական աշխատանքներ՝ բավարար,<br>3.Իրականացվել են նախապատրաստական և բովանդակային (չափանիշների սահմանում, այլ) բազմաթիվ գործառույթներ՝ լավ,<br>4.Իրականացվել է անհատական ուսուցման պլանով ուսուցում՝ գերազանց |
| 3.Ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար անհատական ուսուցման կազմակերպում | ՌԻստարվա ընթացքում պարտադիր նվազագույն գիտելիքի ձեռք բերում, բավարար գնահատականի ինքնուրույն ապահովում | Գործողությունն իրականացնելու ուղղությամբ՝<br>1.Որևէ գործառույթ չի իրականացվել՝ անբավարար<br>2.Իրականացվել է սովորողների նախապատրաստական աշխատանքներ՝ բավարար<br>3.Իրականացվել է առարկայական պարապմունքներ՝ լավ<br>4.Բավարար գնահատականի ինքնուրույն ապահովում ՝ գերազանց |
| 4.Հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ | Սովորողների լիարժեք ընդգրկում հանրակրթության մեջ | 1.միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար<br>2.միջոցներ ձեռնարկվել են մասամբ՝ բավարար<br>3.միջոցներ ձեռնարկվել են լիարժեք՝ լավ<br>4. ապահովվել է սահմանված բոլոր կետերը՝ գերազանց |

| | | |
|---|---|---|
| 5.Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների, նյութատեխնիկական,ուսումնամեթոդական սարքերի, դիդակտիկ նյութերի կիրառում | Գիտելիքների և կարողունակութ յունների ձեռք բերում | 1.Միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար<br>2.միջոցներ ձեռնարկվել են մասամբ՝ բավարար<br>3.միջոցներ ձեռնարկվել են լիարժեք՝ լավ<br>4. ապահովվել է սահմանված բոլոր կետերը՝ գերազանց |

## 3.3 Բազմակարծիք, ներառական և մասնակցային ժողովրդավարության գործիքների կիրառությունը և դրանց գնահատման չափանիշները

| Գործողությունները | Ակնկալվող արդյունք | Գնահատման չափանիշ |
|---|---|---|
| 1.Դպրոցում ժողովրդավարության սկզբունքով ստեղծված արժեքային միջավայրի ապահովում | Բոլորի համար հավասար իրավունքներ, պարտականություններ: Հաջողությունները և թերությունները կլինեն համընդհանուր Յուրաքանչյուրը իրեն կզգա արժևորված, որն էլ կհանգեցնի ուսման որակի, կատարվող աշխատանքի արդյունավետության բարձրացման | 1. Միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար<br>2.գործիքներն կիրառվել են մասամբ՝ բավարար<br>3.միջոցներ և գործիքներն կիրառվել են լիարժեք՝ լավ<br>4. ապահովվել է ժողովրդավա-րություն՝ գերազանց |

## 3.4 Աշխատակազմին արժևորելու, խրախուսման և ինքնակրթությանմիջավայրի ձևավորման գնահատման չափանիշները

| Գործողությունները | Ակնկալվող արդյունք | Գնահատման չափանիշ |
|---|---|---|
| 1.Խրախուսման միջոցներ | Աշխատանքային մոտիվացիա մասնագիտական որակների բարձրացման, մյուսների համար որպես օրինակ | 1.Միջոցներ չեն ձեռնարկվել՝անբավարար<br>2.Բանավոր  խրախուսում՝ բավարար<br>3.պատվոգրով խրախուսում՝ լավ<br>4. Պարգևատրում և՛ պատվոգրով, և՛ դրամական՝ գերազանց |
| 2.Ինքնակրթության միջավայրի ձևավորում | Նոր մեթոդների և մոտեցումների, Ժամանակակից հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառում | 1.Միջոցներ չեն ձեռնարկվել՝անբավարար<br>2.միջոցներ ձեռնարկվել են մասամբ՝բավարար<br>3.տրամադրված է սենյակ և տեխնիկական սարքավորումներ՝լավ<br>4.տրամադրված է սենյակ և սարքավորումներ, մանկավարժների ակտիվ գործունեություն՝ գերազանց |

## 3.5 Համագործակցությունը կառավարման և խորհրդակցական մարմինների հետ

| Գործողությունները | Ակնկալվող արդյունք | Գնահատման չափանիշ |
|---|---|---|
| 1.Տնօրենը Խորհրդի հավանությանն և քննարկման է ներկայացնում ուսումնադաստիարակչական գործունեության, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում ԿԱՊԿՈՒ սովորողների կազմը, ներքին և արտաքին գնահատման հաշվետվությունները<br><br>2.Առնվազն երկու անգամ ներկայացնում է զարգացման ծրագրի կատարման հաշվետվությունները: Խորհրդի կողմից տրվում է եզրակացություն:<br><br>3.Հաստատման է ներկայացնում՝ դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները, կարգի համաձայն տնօրենի կողմից մշակված՝ ուսուցչի թափուր տեղի | Տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև հաստատված է արդյունավետ երկխոսություն, համագործակցային աշխատանք, որոնց շրջանակում | 1. Միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար<br>2.միջոցներ ձեռնարկվել են մասամբ՝ բավարար<br>3.միջոցներ ձեռնարկվել են լիարժեք՝ լավ<br>4. ապահովվել է սահմանված բոլոր կետերը՝ գերազանց<br><br>1.Միջոցներ չեն ձեռնարկվել՝անբավա |

| | | |
|---|---|---|
| համար անցկացվելիք մրցույթի կարգը:<br><br>4.Խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում խորհրդի նիստերին:<br><br>5.Ապահովում խորհրդի իրավական հիմք ունեցող որշումները<br><br>Պետական ուսումնական հաստատության խորհուրդը՝<br><br>6.Ղեկավարում է մանկավարժական խորհրդի աշխատանքները և կատարում մանկխորհի կողմից ընդունված որոշումները<br><br>7.Տարեկան առնվազն երկու համադպրոցական ծնողական ժողով է անում , որտեղ ներկայացվում է յուրաքանչյուր կիսամյակում կատարված աշխատանքները<br><br>8.Սերտ համագործակցում ԷԾԽ-ի և ԱԽ-ի հետ | լուծում են ստանում կրթության կազմակերպման օրակարգային հարցեր: | բար<br>2.միջոցներ ձեռնարկվել են մասամբ՝բավարար<br>3.համագործակցությունը պարբերաբար է՝լավ<br>4.համագործակցությունը մշտական է և խնդիրները լուծում են ստանում՝գերազանց |

## 3.6 ՏԻՄ-ի, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության բարելավում

| Գործողությունները | Ակնկալվող արդյունք | Գնահատման չափանիշ |
|---|---|---|
| 1.Տեղական ինքնակառավարման մարմին | 1.Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաններին տարբեր ծրագրերի մեջ ընդգրկում ՌԻսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպելու շրջանակներում՝ դպրոցի ակտիվ մասնակցությունը (սպորտլանդիա, առարկայական մրցույթներ օլիմպիադաներ, միջոցառումներ | 1. Միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար<br>2.միջոցներ ձեռնարկվել են մասամբ՝ բավարար<br>3.միջոցներ ձեռնարկվել են լիարժեք՝ լավ<br>4. ապահովվել է սահմանված բոլոր կետերը՝ գերազանց |
| 2.Համայնք—Ծնողական համայնք - Դպրոց<br>Դպրոցը որպես մշակույթային,սպորտայինկրթական կենտրոն | 2.Դպրոցը որպես համայնքի մշակույթային կենտրոն Դպրոցի համար ֆինասավորման լրացուցիչ աղբյուր | 1. Միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար,<br>2.միջոցներ ձեռնարկվել են մասամբ՝ բավարար,<br>3.միջոցներ ձեռնարկվել են լիարժեք՝ լավ,<br>4. ապահովվել է նշված գործողությունները՝ |

| | | |
|---|---|---|
| 3.Բարեբարներ | Նպատակային ներդրումներ | գերազանց<br><br>1. Միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար<br>2.միջոցներ ձեռնարկվել են մասամբ՝ բավարար<br>3.միջոցներ ձեռնարկվել են լիարժեք՝ լավ<br>4. ապահովվել է նշված գործողությունները՝ գերազանց |

## 3.7 Արտադպրոցական և երկարօրյա ուսուցման ապահովում

| Գործողությունները | Ակնկալվող արդյունք | Գնահատման չափանիշ |
|---|---|---|
| 1.Արտադասարանական, արտադպրոցական, երկարօրյա խմբերի ձևավորման աշխատանքներ | Դպրոցի բովանդակային որակական բարձր ցուցանիշ:Երկարօրյա խմբակում սովորողը ձեռք է բերում ինքնուրույն դասապատրաստման և սովորելու կարողունակություն: | 1. Միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար<br>2.միջոցներ ձեռնարկվել են մասամբ՝ բավարար<br>3.միջոցներ ձեռնարկվել են լիարժեք՝ լավ<br>4. ապահովվել է նշված գործողությունները՝ գերազանց |
| 2.Վճարովի հիմունքներով, հանրակրթական հիմնական ծրագրերից դուրս, հանրակրթական և/կամ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրեր իրականացնել:<br>Ձևավորել արտադասարանական խմբակներ: | Երկարօրյա խմբերի ձևավորում՝ վճարովի կամ մասնակի վճարովի:<br>Արտադպրոցական աշխատանքներին ներգրավվում են նաև ծնողները: | 1. Միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար<br>2.միջոցներ ձեռնարկվել են մասամբ՝ բավարար<br>3.միջոցներ ձեռնարկվել են լիարժեք՝ լավ<br>4. ապահովվել է նշված գործողությունները՝ գերազանց |

## 3.8 Հալածանքի, օտարման եվ բռնության կանխարգելման միջոցների կիրառումը և դրանց գնահատման չափանիշները

| Գործողությունները | Ակնկալվող արդյունք | Գնահատման չափանիշ |
|---|---|---|
| 1.Դպրոցում ապահովել հոգեբանական անվտանգ միջավայր : Համագործակցություն Ոստիկանության հետ | Ազգային փոքրամասնության,կրոնական այլ ուսմունք ունեցող, սոցանապահով ԿԱՊԿՈՒ սովորողները ապահով են և անվտանգ: Ընդգրկված են ուսուցման և Դպրոցի գործունեության մեջ ՈՒսման որակի բարձրացում Հալածանքի,բռնության, օտարման կանխարգելման միջոցառումների կազմակերպում և վերահսկողություն ; Բացահայտել, իրազեկել, և՛ ծնողներին, և՛ մանկավարժներին : Բռնության,հալածանքի կամ օտարման դրսևորման ձևին համապատասխան կազմակերպել խորհրդատվություններ, քննարկումներ,հանդիպումներ | 1.Միջոցներ չեն ձեռնարկվել՝անբավարար 2.ապահոված է անվտանգ միջավայր՝բավարար 3.սովորողների ընդգրկվածությունը 80 % է՝լավ 4.նշված բոլոր կետերը իրականացվում են՝գերազանց |

## 3.9 Օրենքով սահմանված նորմատիվ, ներքին իրավական ակտերի վարման, կիրառման և թափանցիկության, հաշվետվողականության ապահովում

| Գործողությունները | Ակնկալվող արդյունք | Գնահատման չափանիշ |
|---|---|---|
| 1.Դպրոցավարության՝ նորմատիվ իրավական ակտերի իրազեկում և գործածություն | Դպրոցավարություն՝ օրենքի, կարգերի և ընթացակարգերի սահմաններում, առանց խախտումների, ի շահ սովորողի և մանկավարժի, որոշումների և հրամանների կատարողականություն<br><br>Իրազեկում իրականացնել՝ ժողովների, նիստերի, էլեկտրոնային և թղթային | 1. Միջոցներ չեն ձեռնարկվել՝ անբավարար 2. միջոցներ ձեռնարկվել են մասամբ՝ բավարար 3. միջոցներ ձեռնարկվել են լիարժեք՝ լավ 4. ապահովվել է Դպրոցի փաստաթղթաշրջանառության ու գործավարության համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը՝ գերազանց |

| | | |
|---|---|---|
| 2.Հաշվետվություններ | տարբերակներով<br><br>Ըստ պահանջի և ժամանակացույցի ներկայացնել հաշվետվություններ Կատարողականության բարձր ցուցանիշ Թիմային մոտեցում, | 1.Հաշվետվություններ չեն ներկայացվել՝անբավարար<br>2.հաշվետվություններ ներկայացվել են ոչ ժամանակին՝բավարար<br>3.հաշվետվություններ ներկայացվել են մասամբ՝լավ<br>4.հաշվետվությունները ներկայացվել են ըստ պահանջի և ժամանակին՝գերազանց |

## 4. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Վերահսկողության արդյունքները կներկայացվեն հաշվետվությունների սահմանված ձևերով:Ծրագրի նպատակային իրագործման վերահսկողությունն իրականացվում է ուսումնական հաստատության կառավարման խորհուրդը ՝ հանրակրթության ոլորտը կարգավորող օրենսդրության համաձայն, տարեկան առնվազն երկու անգամ յուրաքանչյուր կիսամյակի վերջում:

Ծրագիրը ենթակա է փոփոխությունների՝ ժամանակակից կրթական պահանջների դինամիկ փոփոխություններին համահունչ, ներքին կամ արտաքին գործոնների օբյեկտիվ ազդեցությունների դեպքում, ժամկետից շուտ առանձին գործառույթներ իրականացվելուց հետո:Ծրագրի իրականացման գործընթացի վերահսկողությունը պետք է իրականացնել ծրագրում նախապես մշակված միջոցառումների միջոցով, որոնք պարբերաբար կարող են փոփոխվել և հարստացվել:Զարգացման ծրագիրը հիմք է ստեղծում հաստատության գործունեության տարեկան աշխատանքային ծրագրի մշակման համար, որը հաստատության միջնաժամկետ/ մեկ ուսումնական տարվա համար կազմված/ զարգացման ծրագրային փաստաթուղթն է:Հինգ տարվա համար մշակված ծրագիրը պարբերաբար կվերանայվի տնօրենի կողմից և համապատասխան փոփոխություններով հանդերձ կներկայացվի կառավարման խորհրդին՝ հավանության արժանանալու համար:

Յուրաքանչյուր գործողության համար մշակված են վերահսկողության մեխանիզմներ, որոնք պետք է հաստատվեն խորհրդի կողմից: Յուրաքանչյուր գործողության համար սահմանված են հաշվետվությունների ձևերն ու ժամանակացույցը, որոնք պետք է հաստատվեն խորհրդի կողմից և ի գործ դրվեն:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին խորհրդին ներկայացնել զարգացման ծրագրի կատարման հաշվետվություն , որում արտացոլված կլինի միջնաժամկետ ծրագրում նախատեսված աշխատանքների չափելի և շոշափելի տեղեկատվությունը:

## 5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

| No | Միջոցա-ռում/ գործողու-թյուն | Ակնկալվող արդյունք | Սահման-ված ժամկետ | Կատարված աշխատանքի նկարագրու-թյուն | Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման/ առկայության դեպքում/ պատճառները | Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մա- սին առաջարկու-թյուններ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Յուրաքանչյուր ուսումնական տարվա աշխատանքային գործունեության ծրագիրը մշակել ԴԶԾ-ի, ԿԽ-ի կողմից հավանության արժանանալուց հետո | Ըստ տարեկան աշխատանքային ծրագրի նախատեսված աշխատանքների կատարման դեպքում կունենանք իրավիճակի գնահատում,որը հետագա աշխատանքների պլանավորման հիմքն է: | Սեպտեմբերի առաջին շաբաթ(յուրաքանչյուր ուստարի) | Համաձայն դպրոցի ներդպրոցական վերահսկողության տարեկան պլանի իրականացնել վերահսկողություն ըստ ոլորտների նախատեսված աշխատանքների իրականացման համար՝ ՀՊՉ-ին համապատասխան | Ֆորս- մաժորային իրավիճակ | Յուրաքանչյուր տարի վերանայել և ըստ անհրաժեշտության, դուրս գալով շահառու խմբերի կարիքներից,փոփոխություն կատարել զարգացման ծրագրում | |
| 2 | Տարեկան աշխատանքային ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն ԿԽ-ին ներկայացնել յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին | Հաշվետվության կազմման համար հիմք կհանդիսանան այն հաշվետվություննրը, որոնք կազմվում են տնօրենի, տնօրենի տեղակալի, դաստիարակչական աշխատանքների համակարգողի կողմից, որը հնարավորություն կտա վերլուծել առակա աշխատանքները և պլանավորել հետագա անելիքները: | Յուրաքանչյուր ուսումնական տարվա կիսամյակի ավարտին: | Համաձայն դպրոցի ներդպրոցական վերահսկողության տարեկան պլանի իրականացնել վերահսկողություն ըստ ոլորտների նախատեսված աշխատանքների իրականացման համար | Ֆորս- մաժորային իրավիճակ | Յուրաքանչյուր տարի վերանայել դուրս գալով պետության կրթական քաղաքականությունից, շահառու խմբերի կարիքներից,փոփոխություն կատարել զարգացման ծրագրում ըստ անհրաժեշտության | |
| 3 | Ներկայացնել հաշվետվություն՝ տարեկան աշխատանքային պլանի հաշվետու ժամանակաշրջանի համար | Հաշվետվության կազմման համար հիմք կհանդիսանան տնօրենության, խորհրդակցական մարմինների,ԴԱԿ-ի կողմից կազմված հաշվետվությունները: Հետագա | Յուրաքանչյուր ուսումնական տարվա կիսամյակի ավարտին: | Համաձայն դպրոցի ներդպրոցական վերահսկողության տարեկան պլանի իրականացնել վերահսկողություն ըստ ոլորտների | Ֆորս- մաժորային իրավիճակ | Յուրաքանչյուր տարի վերանայել դուրս գալով պետության կրթական քաղաքականությունից, շահառու խմբերի կարիքներից,փոփոխություն կատարել զարգացման ծրագրում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | աշխատանքների պլանավորման համար հնարավոր կլինի ճիշտ վերլուծել և գնահատել առկա իրավիճակը աշխատակիցների կողմից։ | | նախատեսված աշխատանքների իրականացման համար | | ըստ անհրաժեշտության | |
| 4 | ԴԶԾ-ի ամենամյա կատարողական ցուցանիշները ամփոփել՝ ներառելով կառավարման և խորհրդակցական մարմինների հաշվետվությունները, մանկավարժական աշխատողների և ուսումնաօժանդակ անձնակազմի հաշվետու արդնունքները։ | Հաշվետվության հիմքն են տնօրենի տեղակալների,դասղեկների,գրադարանավարի,հաշվապահի,հոգեբանի և բոլոր մանկավարժական աշխատողների տարեկան աշխատանքային ծրագրային կատարողականները, որից դուրս գալով կկատարվի վերլուծություն և նոր շխատանքների պլանավորում | Յուրաքանչյուր ուստարվա սեպտեմբերի առաջին շաբաթ(յուրաքանչյուր ուստարի) | Համաձայն ներդպրոցական վերահսկողության աշխատանքային պլանի իրականացնել վերահսկողություն, նախատեսված աշխատանքներն իրականացման համար | Ֆորս- մաժորային իրավիճակ | Յուրաքանչյուր տարի վերանայել դուրս գալով պետության կրթական քաղաքականությունից, շահառու խմբերի կարիքներից,փոփոխություն կատարել զարգացման ծրագրում ըստ անհրաժեշտության | |
| 5 | Աշխատակազմի կառավարում և մասնագիտական զարգացում | Բարոյահոգեբանական մթնոլորտի առկայություն, փոխադարձ վստահության պայմաններում ուսումնական գործընթացի իրականացում | 2023-2028թթ յուրաքնչյուր ուսումնական տարվա ընթացքում | Մանկավարժական աշխատողների ընտրությունն իրականացնել օրենքով սահմանված կարգով, հաշվի առնելով թե՛ մասնագիտական ,թե՛ մարդկային որակները | Ֆորս- մաժորային իրավիճակ | Զարգացման ծրագիրը պարբերաբար վերանայե լդուրս գալով պետության կրթական քաղաքականությունից, շահառու խմբերի կարիքներից,փոփոխություն կատարել զարգացման ծրագրում ըստ անհրաժեշտության | |
| 5.1 | Մանկավարժական աշխատողների թափուր տեղերի համալրում | Առարկայի ուսուցման շարունակականության ապահովում | Ուսումնական տարվա ընթացքում | Մանկավարժական աշխատողների ընտրությունն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ թափանցիկ ու արդար | Ֆորս- մաժորային իրավիճակ | Զարգացման ծրագիրը պարբերաբար վերանայե լդուրս գալով պետության կրթական քաղաքականությունից, շահառու խմբերի կարիքներից,փոփոխություն կատարել զարգացման ծրագրում ըստ անհրաժեշտության | |
| 5.2 | Դասալսումների իրականացում | Մանկավարժների ցուցաբերվում է մեթոդական և մասնագիտական աջակցություն, կատարվում է փորձի փոխանակում | Ուսումնական տարվա ընթացքում | Դասալսումները կատարվում են տնօրենության,մեթոդական միավորումների նախագահների, մասնախմբերի ուսուցիչների կողմից, արդյունքները քննարկվում են մեթոդ միավորման,մանկավարժական խորհրդի | Ֆորս- մաժորային իրավիճակ | Ելնելով դասալսման նպատակից,դասավանդման որակից, կատարել համապատասխան փոփոխություն ըստ անհրաժեշտության | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | նիստերին | | | |
| 5.3 | Մանկավարժական աշխատողների խրախուսում | Մասնագիտական զարգացմանն ուղղված ծրագրերին մասնակցություն, ըստ գրանցած արդյունքի վարձատրության բարձրացում | Ուսումնական տարվա ընթացքում | Նախաձեռնել և իրականացնել մասնագիտական վերապատրաստումներ | Ֆորս- մաժորային իրավիճակ | Հիմք ընդունել ցուցանիշներն ու ձեռքբերումները | |
| 5.4 | Մանկավարժների վերապատրաստման ծրագրերի որակի մշտադիտարկում և հետադարձ կապի ապահովում | Մանկավարժների կողմից ուսուցման գործընթացում նոր հմտություննե րի, մեթոդների կիրառում | Ուսումնական տարվա ընթացքում | Օժանդակել մանկավարժների ն մասնակցելու մասնագիտական վերապատրաստումներին, նորարարություններին | Ֆորս- մաժորային իրավիճակ | Ելնելով կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխություններից և կրացումներից, ապահովել դրանց ներառումը տարեկան աշխատանքային ծրագիր և հետամուտ լինել կիրառմանը | |
| 6. | Հաղորդակցություն և համայնքի հետ համագործակցություն | Կրթության որակի բարձրացման և սովորողների առաջադիմության խրախուսում, դպրոց-համայնք կապի ամրապնդում | Ուսումնական տարվա ընթացքում | Ապահովել արդյունավետ հաղորդակցություն ուսումնական գործընթացի շահառուների հետ՝ ներգրավելով համայնքին | Ֆորս- մաժորային իրավիճակ | Ելնելով հաստատության հիմնախնդիրներից և դրանց լուծման վերաբերյալ առաջարկություններից | |
| 7. | Ծնողներին ուսումնական գործընթացի մասին ժամանակին իրազեկում | Ծնող-դպրոց կապի ամրապնդում | Ուսումնական տարվա ընթացքում | Լսել ծնողների դիտարկումներն ու առաջարկները, քննարկել և ըստ հնարավորությա ն՝ իրականացնել | Ֆորս- մաժորային իրավիճակ | Ելնելով ծնողների ողջամիտ առաջարկություններից վերանայել զարգացման ծրագիրը | |

## 6. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Դպրոցի վարկանիշի և հեղինակության բարձրացում
- Դպրոցում ունենալ ապահով,ջերմ միջավայր
- Ուսումնանյութական ժամանակակից բազա
- Ունենալ անսպառ գիտելիքներով օժտված,հոգատար,հանդուրժող ուսուցիչներ ու մանկավարժական աշխատողներ
- ՏՏ կիրառումը դարձնել ամենօրյա կրթության մաս
- Զևավորել քննադատական մտածողությամբ և վերլուծող անհատ
- Ունենալ մրցունակ և օրինակելի դպրոց
- Ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան աշակերտական խորհուրդ

- Աշակերտների անհատականության դրսևորում
- Ուսման նկատմամբ մոտիվացիայի բարձրացում, որակի բարելավում:
- Աշակերտների գիտատեխնիկական կարողունակությունների ձևավորում
- Ճանաչողության և հետաքրքրությունների զարգացում
- Մշակութային կարողունակությունները և արժեքային համակարգի ձևավորված սովորողներ:
- Առողջության պահպանում և ամրապնդում, հանգստի և ժամանցի կազմակերպում
- Աշխատանքի նկատմամբ մոտիվացիայի բարձրացում
- Ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավում

Սպասվելիք արդյունքների ապահովման գործընթացում խիստ կարևոր կլինի թե՛ բարձր մասնագիտական, թե՛ մարդկային բարձր որակներով օժտված մանկավարժական կադրերի ձևավորումն ու նրանց աշխատանքը խրախուսելու,խթանելու ընթացքը:

## Եզրափակիչ խոսք

Ցանկացած զարգացման ծրագիր, ինչքան էլ հրաշալի կերպով շարադրված լինի, չի կարող միայնակ իրագործվել:Այն ենթադրում է թիմային աշխատանք, երբ թիմի բոլոր ամդամները նայում են նույն ուղղությամբ, ունեն մեկ առաքելություն՝ սեր, հոգատարություն, ջերմություն ու ապահովություն տալ յուրաքանչյուր երեխայի:Քանզի դպրոցն այն միակ տեղն է, որտեղ ուսուցիչը կարող է երազանքի թևեր նվիրել իր աշակերտին, օգնի որ նա հաղթահարի անհաղթահարելի թվացող արգելքները: Արագ փոփոխվող աշխարհում շատ հաճախ չենք հասցնում մարսել այն բոլոր փոփոխությունները, որոնք օր օրի գալիս են:Հուսով եմ մեր աշխատանքը չի լինի ժամանակավրեպ:Իսկ մեզ համար ամենամեծ պարգևը մեր, տարիների ընթացքում ավարտած ու կայուն մարդիկ դարձած, շրջանավարտների ժպիտով բարևն է: